П. Тыглиянц принимал участие в организации и проведении двух международных конференций (2009, 2012 гг.), посвященных научному наследию выдающегося ученого-геолога Н. Головкинского (1834–1897), инициированных Крымской академией наук совместно с научными центрами России, был редактором сборников научных докладов участников этих конференций.

СЕСТРЫ ЛАЗАРЕВЫ

Во второй половине восьмидесятых годов прошлого столетия мне представилась возможность познакомиться с Эдгаром Рудольфовичем Паппе. Его предки имели армянские и немецкие корни. Благодаря феноменальной памяти Эдгара Рудольфовича нам удалось восстановить генеалогические связи нескольких известных армянских родов, проживавших на крымской земле в XVIII – XX веках, узнать адреса некоторых из здравствующих потомков. В числе этих лиц оказались и потомки многочисленного армянского рода Лазаревых.

В Москве жила Нелли Вениаминовна Татаренкова, дочь одной из трех сестер Лазаревых, участниц, как и она сама, антифашистского подполья в период оккупации Крыма немецко-румынскими войсками в 1941–1944 годах. Нелли Вениаминовна помогла мне восстановить некоторые факты из своей биографии и биографий ее тетушек, очень скудно представленных в военно-исторической и мемуарной литературе.

Жизнь сестер Лазаревых заслуживает истинного уважения и гордости.

Лазарь Емельянович Лазарев (умер в 1905 году) был женат на Агафье Никитичне Кешишевой (1869–1943), служил управляющим в одном из крупных имений княгини Гагариной на Южном берегу Крыма, в радиусе современной Большой Алушты. У него было три сестры: Серафима, Мария и Анна, которым он помог получить высшее образование. В Крыму родились три его дочери – Софья (1899–1985), Наталья (1902–1967) и Евгения (1905–1985).

Все три дочери Лазаря Емельяновича учились в частной женской гимназии Е. И. Оливер, открывшейся в Симферополе в 1904 году. Русский язык и литературу здесь преподавал писатель и драматург Константин Тренев, автор известной пьесы «Любовь Яровая», где в образе героини запечатлел черты крымской революционерки Лауры Багатурьянц.

Софья Лазарева, окончив гимназию, некоторое время работала библиотекарем, а затем поступила в Крымский пединститут, где полу-

чила диплом преподавателя русского языка и литературы, и до самой войны учительствовала в симферопольской средней школе № 9. Ее сестра Евгения завершала среднее обучение уже в советский период и после пединститута первые годы преподавала русский язык в татарской школе приморского городка Гурзуфа. Затем был институт повышения квалификации работников народного образования и служба в Крымском наркомпросе. Средняя сестра Наталья увлеклась востоковедением, но закончить университетский курс ей так и не удалось, помешали замужество, а потом – война. Ее дочь Нелли Татаренкова вспоминала о своей маме и тетушках: «Все они были очень хорошими, честными, сердечными людьми. Софья Лазаревна – учитель с большой буквы. Литература была любимым предметом в ее учеников. Она умела из «отпетых» ребят делать отличников. Мама была очень тактичным человеком, очень доброжелательна ко всем. Она была добрым гением нашего дома. Евгения Лазаревна – дитя своего времени, очень прямолинейная, не терпящая никаких компромиссов...» Видимо, эти качества и послужили в немалой степени тому, что в годы оккупации Евгения Лазарева стала одним из руководителей симферопольского антифашистского подполья.

Предвидя ведение боевых действий на территории СССР, ЦК ВКП(б) 18 июля 1941 года принял постановление «Об организации борьбы в тылу германских войск». В сентябре враг уже занял Симферополь. В начале октября в Керчи был создан областной подпольный партийный центр, которому предстояло формировать подпольные группы из коммунистов и комсомольцев. Независимо от этой организации готовила своих агентов и советская разведка. Но реально возникшее движение сопротивления приобрело совсем иной характер.

В городах и селах Крыма многие подпольные группы возникали стихийно: близкие по духу и патриотическому настрою люди собирались и думали, что можно сделать, чтобы хоть чем-то нанести ущерб ненавистным оккупантам, приблизить день освобождения. Так возникла симферопольская группа учителей, куда вошли сестры Лазаревы, Волошиновы, Щербина, Москвитина, Урадовы, Панова и другие. Позже к ним присоединился Анатолий Косухин. Его мать, Мария Косухина, преподавала в начальных классах. Они дружили с Лазаревыми. Анатолий Косухин только перешел в десятый класс. Он сам собрал радиоприемник и начал слушать передачи советского информбюро, готовить и распространять листовки.

До войны Евгения и Софья Лазаревы жили в Симферополе по улице Акмечетской, 46 (ныне – Таврическая), а Наталья Лазарева с матерью Агафьей Никитичной и дочерью Нелли – в Северном переулке. Когда немцы и румыны выселили местное население из центра города, Лазаревы сняли часть дома у Елизаветы Сергеевны Суховой по улице Островского, 6. Это был дом, окруженный глухим забором. В нём было много комнат, в которые вели двери из узкого коридора. После смерти матери туда же в 1943 году перебралась и Наталья Лазарева. Именно эту квартиру в октябре 1943 года сделали не только конспиративной, но и решили поселить в ней Ивана Козлова, назначенного руководителем Симферопольского подпольного горкома партии.

Иван Козлов в сопровождении связных Северного соединения партизан Крыма Григория Гузия и Евгении Островской был доставлен на конспиративную квартиру сапожника Ивана Бокуна. Нелли Татаренковой было тогда 15 лет, и ей хорошо запомнился тот солнечный день, когда она, в куртке и сапогах, сшитых дядей Иваном, встретила на явочной квартире человека небольшого роста в очках с толстыми линзами и проводила его в дом, где они теперь жили. Евгения Лазарева стала заместителем руководителя подпольного горкома партии, а Анатолий Косухин возглавил его молодежное звено. Комитет объединил 42 подпольные организации и группы общей численностью до 400 человек.

В задачу подпольщиков входил сбор данных о передвижениях вражеских войск, их замыслах. Отдельные группы планировали и проводили диверсионную работу. Подпольщики Иван Волошинов, который был художником, и Борис Хохлов сделали фальшивые документы для Козлова на имя Бунакова. Однако вскоре Козлов перешел на другую конспиративную квартиру, а эта оставалась для связи.

В одном классе с Анатолием Косухиным учился Элизе Стауэр (Павлик). Он работал чабаном в Зуйском районе. Раз в неделю доставал в лесу

из тайника приготовленные партизанами газеты, листовки, взрывчатку и приносил на квартиру к Лазаревым. Содержимое вываливал прямо на кровать, в том числе и мины. Потом это надо было рассортировать и незаметно передать в диверсионные группы. Например, взрывчатку ухитрялись прятать в мешочках с мукой. Одним из издателей газеты «Красный Крым», которая печаталась в лесной партизанской типографии и переправлялась в Симферополь, был Севан Логенбашев.

В конце 1943 года начались провалы. Румынская контрразведка, создавая лжепатриотические группы, сумела выйти на след многих подпольщиков, которые в предчувствии скорого наступления советских войск утратили некоторую бдительность и допустили внедрение предателей. В это время 4-й Украинский фронт и Отдельная приморская армия, закрепившаяся на керченском плацдарме, уже были готовы к штурму и освобождению Крыма. Но операция по стратегическим соображениям Ставки откладывалась до весны 1944 года.

Подпольщики начали менять квартиры, места встреч. Евгения Лазарева поселилась в квартире Нестеровых по улице Салгирной (ныне – проспект Кирова).

Весь период оккупации в городе работала советская разведчица, крымчанка Людмила Васильевна Скрипниченко. Ее деятельность координировалась советскими чекистами из особого отдела, находившегося в ставке партизанского соединения. 4 марта 1944 года Людмила Скрипниченко была вызвана в СД (служба безопасности), где ей показали список подпольщиков и предложили войти к ним в доверие, чтобы раскрыть всю сеть организаций. Дали неделю срока. За это время, находясь под постоянным наблюдением агентов контрразведки, «Лесная» успела многих предупредить. «В эти тревожные дни, – пишет в своей книге Галина Скрипниченко, – мама сумела побывать в разных концах города. Домой к подпольщикам она не ходила, предупреждала при встречах на улице. Так, встретив на Архивном мосту Евгению Лазареву, шепнула ей: «Будьте осторожны, за вами следят…». Уйти из города «Лесной» не удалось, 12 марта ее арестовали, а затем расстреляли. За два дня до вступления в Симферополь советских войск был арестован и расстрелян ее муж Александр Скрипниченко.

13 марта за Лазаревыми пришли на улицу Островского, но там их уже не было. Их разыскала соседка Елена Ивановна Москвитина и предупредила: «Уходите». Спрятались до темноты в противотанковом рву. Вместе с подпольщиками Дановыми Лазаревы сумели незаметно уйти в партизанский лес. Месяц они находились в 17 отряде Северного соединения партизан Крыма у горы Яманташ.

13 апреля советские войска освободили Симферополь, и Лазаревы вернулись в город. 30 апреля вышло постановление СНК Крымской АССР о подготовке к призыву молодых крымчан. В их число вошли и парни армянской национальности, которые влились в состав 51-й армии и участвовали в завершающих боях по освобождению Севастополя. Представители многих других национальностей, за исключением русских, украинцев, белорусов, от призыва были освобождены до особого распоряжения или вообще призыву не подлежали.

Через два месяца, ночью 27 июня 1944 года, началось выселение из Крыма 37 тысяч армян, болгар и греков. В их числе оказались и сестры Лазаревы. Их везли в разных товарных эшелонах и в разном направлении. Случайно на одной из станций они встретились, и им разрешили ехать вместе.

Ехали около двух недель до станции Усятый под городом Прокопьевском. Поселили в овощехранилище совхоза «Зиминский». Евгения и Софья Лазаревы работали учетчицами, а Наталья Лазарева с дочерью Нелли – в поле. Зимовали в землянках…

В августе 1945 года как участницы крымского подполья Лазаревы были освобождены от режима спецпоселения без права возвращения в Крым. Но как только такая возможность появилась, они приехали в родной город и продолжали трудиться до ухода на пенсию. Евгения Лазарева была членом бюро секции партизан и подпольщиков Крыма.

Прошло 30 лет со дня разрушительного Спитакского землетрясения, когда за считанные секунды превратились в руины города и сёла, погибли и покалечились тысячи людей, после чего современная история Армении поделилась на до и после землетрясения.

По официальным данным сила подземных толчков в эпицентре – в селе Налбанд Спитакского района Армении составила 10 баллов, в Гюмри (бывший Ленинакан) – 9 баллов, в Ванадзоре (бывший Кировакан) – 8–9 баллов, в Степанаване – 9 баллов. Полностью или частично разрушены 21 город и 342 села, 514 тысяч человек остались без крова, погибли 25 тысяч человек, госпитализированы 12500. Материальный ущерб составил 10 миллиардов американских долларов.

Эта трагическая дата отмечается каждый год 7 декабря не только в Армении, а и во всех армянских диаспорах мира.

ՍՊԻԱՑԱԾ ՎԵՐՔՆ ԷԼ Է ՑԱՎՈՒՄ

Սպիտակի աղետավոր երկրաշարժից անցել է 30 տարի: Թվում է, թե բավականին ժամանակ է անցել, որպեսզի արհավիրքի պատճառած վերքը սպիանա ու դադարի ցավել... Սակայն պարզվում է, որ նույնիսկ երեք տասնամյակն անզոր է. սպին ցավում է մինչև օրս, և ցավն այդ ուժգնանում է հատկապես երկրաշարժի տարեդարձի օրը, երբ կինոժապավենի պես հիշողության ծալքերով անցնում են սարսափազդու տեսարանները՝

վայրկյանների ընթացքում փլատակների վերածված շինությունները, անմեղ զոհերն ու վիրավորների հառաչանքները, խեղված ճակատագրերը, կորուստները, կորուստները...

... 2018 թվական, 7 դեկտեմբերի... Սպիտակի երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակի օր... Սիմֆերոպոլի Սուրբ Հակոբ եկեղեցու բակում գտնվող հուշահամալիրի մոտ մի քանի տասնյակ ղրիմահայեր են հավաքվել, եկել են իրենց հարգանքի տուրքը մատուցելու անմեղ զոհերի հիշատակին, որոնց նվիրված խաչքարի մոտ աղոթքն Աստծուն է ուղղել Հայ Առաքելական Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի Ղրիմի առաջնորդական տեղապահ տեր Մխիթար աբեղա Գրիգորյանը: Գլխիկոր կանգնած՝ ներկաները լուռ լսում են նրան և, հավանաբար, միաժամանակ մտովի հետ են գնում դեպի ոչ հեռավոր անցյալը, հիշում են իրենց գլխով անցածը կամ տարբեր աղբյուրներից լսածն ու կարդացածը... Հատկապես ծանր է նրանց համար, ովքեր անձնական կորուստներ են ունեցել, և պատմելով չէ, որ գիտեն կատարվածի մասին...

Հոգեհանգստի արարողությունն ավարտվում է: Հայր Մխիթարը փարատանքի խոսքերով դիմում է հավաքվածներին: Կարճ ելույթներ են ունենում Ղրիմի Հանրապետության տարածաշրջանային հայկական ազգամշակութային ինքնավարության նախագահի տեղակալ Վահան Վերմիշյանը և ռազմահայրենասիրական դաստիարակության գծով հանձնաժողովի նախագահ Վարդան Գրիգորյանը:

Այնուհետև հնչում է եկեղեցու զանգը, հայտարարվում է լռության րոպե, որն ավելի է ծանրացնում ներկաների կորացած ուսերին նստած բեռը... Ոմանք փորձում են թաքցնել խոնավացած աչքերը...

Միջոցառման ավարտին թարմ ծաղիկներ են հայտնվում խաչքարի պատվանդանին՝ ալ կարմիր վարդեր և մեխակներ: Եվ դրանից հետո միայն փոքր-ինչ խաղաղվում են բոլորի հոգիներն՝ այն բանի գիտակցությամբ, որ ոչ ոք չի մոռացվել և ոչինչ չի մոռացվել:

Միջոցառման մասնակիցներից մեկը՝ գյումրեցի Ալբերտ Սարգսյանը մատաղ է արել՝ զոհվածների հիշատակին... Ներկաները համտեսում են սիրո ճաշը՝ «մատաղն ընդունելի լինի» ավանդական

արտահայտությամբ ընդգծելով իրենց համերաշխությունը մատաղատիրոջ հետ...

Աստիճանաբար դատարկվում է եկեղեցու բակը... Մարդիկ հեռանում են՝ ամեն մեկն իր բան ու գործին: Կյանքը շարունակվում է, ուրեմն՝ պետք է ապրել ու անցնել կյանքի այն հատվածը, որը նախանշված է ի վերուստ՝ յուրաքանչյուրին՝ իր բաժինը: Պետք է չմոռանալ նաև, որ ամեն ինչ ունի իր սկիզբն ու վախճանը, ապրել լավագույն ապագայի հույսով, միշտ հիշելով, որ «Զախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան»:

Ռուշան Փիլոյան

ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ՝ ԹՎԵՐՈՎ

Սպիտակի երկրաշարժը տեղի է ունեցել Հայաստանի հյուսիս-արևմտյան մասում 1988 թվականի դեկտեմբերի 7-ին՝ տեղական ժամանակով ժամը 11:41-ին: Երկրաշարժի ուժգնությունը կազմել է 6,8–7,2 մագնիտուդ, իսկ ըստ Մեդվեդև-Սպենհոյեր-Կարնիկի սանդղակի՝ մակրոսեյսմիկ ինտենսիվությունը X (արտասովոր կործանարար): Շրջանը գտնվում է Ալպերից մինչև Հիմալայներ ձգվող ակտիվ սեյսմիկ գոտու վրա: Ստորգետնյա հզոր ցնցումների հետևանքով կես րոպեում ավերվել է հանրապետության գրեթե ողջ հյուսիսային հատվածը, որտեղ ապրում էր շուրջ 1 մլն մարդ: Երկրաշարժի էպիկենտրոնում՝ Սպիտակ քաղաքի մոտ գտնվող Շիրակամուտ (Նալբանդ) գյուղում ցնցումների ուժգնությունը հասել է 10 բալի (ըստ MSK-64 12 բալանոց սանդղակի): Ստորգետնյա

ցնցումներն զգացվել են Երևանում՝ 6 բալ, ինչպես նաև՝ Թբիլիսիում: Հանրապետության մյուս քաղաքներում պատկերը հետևյալն է. Գյումրիում (նախկինում՝ Լենինական) ստորգետնյա ցնցումների ուժգնությունը 9 բալ էր, Վանաձորում (նախկինում՝ Կիրովական)՝ 8-9 բալ, Ստեփանավանում՝ 9 բալ:

Մագնիտուդը՝ ըստ Ռիխտերի սանդղակի՝ 7,0, հիպոկենտրոնի խորությունը՝ մոտ 10 կմ, գլխավոր ցնցման տևողությունը՝ մոտ 35–45 վրկ.:

Երկրաշարժի ժամանակ երկրի մակերեսին առաջացած բեկվածքի երկարությունը մոտ 37 կմ էր, ուղղաձիգ առավելագույն տեղաշարժը՝ մոտ 2 մ, հորիզոնական տեղաշարժը՝ 0,7–1,0 մ:

Վնասի գոտու մակերեսը 10000 քառակուսի կմ է: Ուժեղ ավերման գոտու մակերեսը 3000 քառակուսի կմ էր:

Ավերվել էր 11 քաղաք և 58 գյուղ, տուժած քաղաքների թիվը 21 էր, գյուղերինը՝ 342: Անօթևան էին մնացել 514000 մարդ:

Զոհերի թիվը 25 հազար էր, այդ թվում՝ Գյումրիում՝ 17000, Սպիտակում՝ 4000, Վանաձորում՝ 1200, Ախուրյանում՝ 500, Ստեփանավանում՝ 125:

Փլատակներից հանվել է 45000 կենդանի մարդ, հոսպիտալացվել է 12500 մարդ: Աղետի գոտուց տեղահանվել է 120 հազար մարդ (կանայք, ծերեր և

երեխաներ), որոնցից 75 հազարը՝ Հայաստանից դուրս, ԽՍՀՄ առողջարաններ:

Նյութական կորուստների արժեքը կազմել է 10 միլիարդ ԱՄՆ դոլար:

Երկրաշարժի հետևանքով վերանայվեց Հայաստանի սեյսմիկ շրջանացման քարտեզը, նախկին երկու՝ 7 և 8 բալային գոտիների փոխարեն ընդունվեց 1, 2 և 3 գոտիներով քարտեզ, որտեղ սեյսմիկ վտանգը արտահայտված էր ոչ թե բալերով, այլ սպասվելիք երկրաշարժերի մաքսիմում արագացումներով:

1-ին գոտու համար այն 200 սմ/վ2 (մոտավորապես 8 բալ), 2-րդ գոտու համար՝ 300 սմ/վ2 (մոտավորապես 8,5 բալ), 3 գոտու համար՝ 400 սմ/վ2 (մոտավորապես 9 բալ):

Օրինակ, Երևանը գտնվում է 3-րդ գոտում, այսինքն՝ կարող է տեղի ունենալ 9 բալ ուժգնության երկրաշարժ:

Երկրաշարժի հետևանքով շարքից դուրս է եկել Հայկական ԽՍՀ արդյունաբերական ներուժի շուրջ 40 տոկոսը:

Չնայած սառը պատերազմի լարվածությանը, երկրաշարժից մի քանի օր հետո Խորհրդային Միության առաջնորդ Միխայիլ Գորբաչովը պաշտոնապես ԱՄՆ-ից մարդասիրական օգնություն է խնդրել (Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին անգամ): 113 երկիր զգալի քանակությամբ մարդասիրական օգնություն է ուղարկել Խորհրդային Միություն՝ փրկարարական սարքավորումներ, որոնողական խմբեր, բժշկական պարագաներ, հագուստ, կենցաղային տարբեր իրեր:

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԳՅՈՒՄՐԻԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՑ

(Նամակը գրվել և հրապարակվել է ՀԲԸՄ ամսագրի (AGBU Magazine) համար)

Սիրելի՛ Գյումրի,

Գյումրի, ես քեզ գիտեմ ու սիրում եմ:

Երբ դու կարդաս այս խոսքերը, հազարավոր մարդիկ՝ հեռվում և մոտիկ, հարազատ ու անծանոթ, հարգանքի տուրք մատուցելիս կլինեն քեզ պատահած մեծ աղետի՝ 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերի հիշատակին: Ես կլինեմ նրանց շարքում՝ վերհիշելով այն սարսափելի օրը, երբ ժամանակը կանգ առավ ճիշտ 11:41-ին՝ ընդմիշտ փոխելով քո ճակատագիրը:

Այսօր կատարվածից անցել է 30 տարի, և անհնար է նայել հետ՝ առանց հայացքը դեպի ապագա ուղղելու: Այլ կերպ լինել չի կարող: Դու քո երկրին ու աշխարհին առաջարկելու շատ բան ունես: Ապագա սերունդների հետ հին աշխարհի շատ պատմություններ ունես կիսելու: Չափազանց շատ հպարտություն և լավատեսություն, որը կառաջնորդի դեպի նորացված, վերականգնված ու հզորացած ապագա: Ես այս ամենից տեղյակ եմ ոչ թե մյուսների պատմությունների, այլ սեփական փորձառության միջոցով, որն ունեցել եմ քեզ հետ իմ կյանքի ընթացքում:

1960 թվականին ես երեխա էի, երբ հայրս, ով երիտասարդ ու տաղանդավոր ճարտարապետ էր, ինձ ներկայացրեց քեզ: Մենք բացահայտեցինք Արփաչայը և անմիջապես քո սահմանից այն կողմ գտնվող հայոց հնագույն մայրաքաղաքի՝ Անիի ավերակները: Իմ հայրը հիանում էր քեզ բնորոշ ճարտարապետությամբ՝ սև և կարմրավուն տուֆից կառուցված կամարակապ շինություններից մինչև բակեր, եկեղեցիներ, խորհրդային շրջանից լավ ու վատ շինություններ:

Նա ուզում էր, որ ես ճանաչեմ քեզ, Գյումրի՛, քանի որ նրա նախնիները կապված էին քեզ հետ: Նրանք սերում են Էրզրումի շրջանից, Ջիթող գյուղից: Նրանք այն նույն մարդիկ են, ովքեր վերաբնակեցրին քո հողերը 19-րդ դարում՝ փախչելով պատմական հայկական հողերի վրա օսմանյան ղեկավարների հետապնդումներից:

Նա ինձ տարավ քո ազգագրական թանգարան՝ Ջիթողցոնց տուն (ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան), որտեղ ներկայացվում են այն մարդկանց կյանքն ու ապրած ժամանակները, որոնցից սերում են քո բնակիչներից շատերը: Նրանք խոսում են մեր ընտանիքի նախնիների լեզվով, որն արմատներ ունի դասական արևմտահայերենում: Սա, իհարկե, վերաբերում է այն մեծ թվով գրողներին ու պոետներին, որոնց ծնել ես դու, ինչպես՝ Ավետիք Իսահակյանը և Հովհաննես Շիրազը: Դու նաև տունն ես մեծ քանդակագործ Սերգեյ Մերկուրովի և փիլիսոփա ու կոմպոզիտոր Գեորգի Գյուրջիևի: Անգամ քո ավանդական հագուստն ու ժողովրդական պարերը տանում են Էրզրումից եկող քո ճանապարհով ՝ դառնալով անցյալն ու ապագան կապող յուրօրինակ մի կամուրջ:

Իմ հայրը նաև ինձ բացատրեց, որ դու վարպետների քաղաք ես, նա քեզ հենց այդպես էր անվանում: Մինչ օրս դու հպարտանում ես լավագույն արհեստավոր վարպետներով, ովքեր աշխատում են մետաղների, փայտի ու քարի հետ: Այս «ուստաները» (հպարտ վարպետները) դեռ կրում են իրենց լավագույն օրերի հանդերձանքը և շարունակում են այն ավանդական տեխնիկան ու միջոցները՝ բացառիկ որակ հաղորդելով քո ապրանքներին, որոնց նմանն անհնար է գտնել թե՛ Հայաստանի ներսում, թե՛ Հայաստանից դուրս:

Այդ ժամանակ ինչպե՞ս կարող էի իմանալ, որ 28 տարի անց իմ հոր Գյումրին նման աղետի առաջ կկանգնի: Դա խորը ցնցում էր, որը իմ հայրը չապրեց, քանի որ հեռացավ կյանքից ընդամենը չորս տարի անց այն էքսկուրսիայից, որն իմ սիրտը բացեց քո առջև:

Անմիջապես երկրաշարժից հետո համալսարանի իմ շատ գործընկերներ, մասնավորապես ուսանողները, շտապեցին օգնել քեզ: Մենք վստահ չէինք, որ կառավարությունը կարող է բավարար քայլեր ձեռնարկել՝ հաշվի առնելով աղետի մասշտաբները: Բառեր չկան նկարագրելու, թե ինչ տեսանք: Սակայն բոլոր ավերածություններից ու արցունքներից անդին՝ Գյումրիի գեղեցկությունը, որը ես տեսել էի հորս աչքերում, ինչ-որ կերպ շարունակեց մնալ իմ մտքում:

Ութ տարի անց ես վերադարձա քեզ մոտ՝ այս անգամ արդեն որպես քո վարչապետ: Քո վնասվածքի մնացորդները դեռ պահպանվում էին քո շուրջ: Ուստի սպասում էի, որ դու ինձ դառնությամբ կդիմավորես, քանի որ մեր կառավարությունը պատերազմի դժվարությունների ու անկախության վաղ շրջանի ցավերի պատճառով քեզ այն ուշադրությունը չէր դարձնում, որին արժանի էիր: Սակայն, ի զարմանս ինձ, դու ինձ դիմավորեցիր ջերմությամբ և երախտագիտությամբ:

Վերապրածներից շատերն ինձ հրավիրեցին իրենց տնակներ այնպիսի մեծահոգությամբ և հյուրընկալությամբ, որը ես երբեք չեմ կարողանա մոռանալ: Նրանց կողմից արված հյուրասիրությունը, նրանց երգերն ու արտասանած բանաստեղծությունները, ի հեճուկս սուղ ու խեղճ պայմանների, վառ վկայությունն էին գյումրեցու հայտնի մեծահոգության, որը ես երբեք մոռանալ չեմ կարող:

Այսօր ես Հայաստանի նախագահն եմ, սակայն քո մասին, Գյումրի՛, ես շարունակում եմ մտածել նախ և առաջ որպես հայ, որպես մարդ, ով լավ գիտի, թե ինչ է Գյումրին, ով է գյումրեցին: Այո, ինձ բախտ է վիճակվել այցելել աշխարհի շատ հին ու նոր քաղաքներ, որոնք բոլորն էլ ունեն իրենց հմայքն ու գրավչությունը: Սակայն քո բացառիկ բնավորությունն ու ոգու մաքրությունն են, որ էլի ու էլի կանչում են ինձ քեզ մոտ:

Սա է պատճառը, որ ես քեզ այցելող ցանկացած օտարերկրացու, ինչպես նաև մեր Հայաստանի, Արցախի ու Սփյուռքի մեր հայրենակիցներին ասում եմ՝ ինչպե՞ս կարող են չսիրահարվել քեզ այնպես, ինչպես ես սիրահարվեցի:

Ես ուզում եմ, որ նրանք վայելեն քո համերն ու բույրերը, քեզ հատկանշական ավանդույթներն ու համեղ խոհանոցը, ինչպես նաև ճանաչեն քո ժողովրդի խելքն ու իմաստնությունը: Ես կառաջարկեմ առավոտյան այցելել քո եկեղեցիներից մեկը՝ ինչպես հաճախ ես եմ անում, գնալ շուկա: Ես հաճախ կանգ եմ առնում սրճարանում՝ մի բաժակ սուրճի շուրջ ծանոթ-բարեկամների հետ «խոսք ու խորաթա» անելու, կշռելու աշխարհի չարն ու բարին: Թե հաջողվում է՝ միանում եմ նրանց Արփաչայի ափերին՝ մի վայր, որն իր մեջ շարունակում է պահել երիտասարդ տղայի ու նրա հոր հիշողությունները՝ կապված իրենց նախնիների անցյալի հետ:

Ես նաև փորձում եմ այցելել քո հին աշխարհի արհեստավորներին՝ դարբիններին, փայտագործներին ու կավագործներին: Լինում եմ հին պանդոկներում, որտեղ տարածվում են Գյումրիի լեզուն ու խոսքը, որտեղ խոսվում են յուրօրինակ բարբառով, որն արտացոլում է քո ավանդույթներն ու քաղաքի հպարտությունը:

Կարո՞ղ ես գուշակել, թե ինչու է ինձ համար ցավի ու ամոթի աղբյուր այն, որ տարեկան 30 հազարից էլ քիչ զբոսաշրջիկ է այցելում քեզ: Այդ թիվը պետք է տասն անգամ ավելի լինի: Ես հավատում եմ, որ դա բոլորի պարտականությունն է այստեղ՝ Հայաստանում և Սփյուռքում՝ անել հնարավոր ամեն բան՝ վերադարձնելու քեզ քո բազմամյա շքեղությունը:

Իհարկե, կգտնվեն մարդիկ, ովքեր կհարցնեն, թե ինչպես ես դու տեղավորելու 300 հազար զբոսաշրջիկների առանց նախ և առաջ գումար ծախսելու ավելի շատ ռեստորաններ, սրճարաններ ու հյուրանոցներ բացելու վրա: Սրան ես կպատասխանեմ՝ որպես սկիզբ առաջարկելով մեկօրյա այցերը: Միայն սա կխրախուսի ներդրողներին կառուցել, վերանորոգել և վերականգնել քո պատմական թաղամասը: Ինչպես տեսնում ես, հին աշխարհի քո էությունը քո առավելությունն է Երևանի ու մյուս քաղաքների նկատմամբ:

Ի վերջո, մեր օրերի Երևանը արդիականացման արդյունքում կորցրել է իր պատմության և ժառանգության մեծ մասը: Երևանի հին հատվածն ամբողջությամբ վերացել է, ուստի մենք մեր հայացքը դարձնում ենք դեպի քեզ, Գյումրի՛, բավարարելու մեր ժառանգությունը հասկանալու ու գնահատելու ձգտումը: Քո շատ կառույցներ հին են, սակայն դրանք պատմամշակութային կառույցներ են, դրանցից յուրաքանչյուրը շատ արժեքավոր է, ունի իր յուրահատուկ ատրիբուտները: Ես, օրինակ, մտադիր եմ մասնակցություն ունենալ որևէ կառույցի վերականգնման գործում: Եվ ես խրախուսում եմ միջոցներ ու հնարավորություն ունեցող անձանց միանալ ինձ:

Այս օրերին Երևանից ցանկացածը կարող է հյուսիս-հարավ մայրուղիով հասնել քեզ 45 րոպեից էլ քիչ ժամանակամիջոցում: Ուստի ես հարցնում եմ ինքս ինձ՝ ինչո՞ւ մենք չենք կարող մեր երեխաներին ու ընտանիքին մեկ օրով կամ հանգստյան օրերին էքսկուրսիայի տանել Գյումրի՝ այն դեպքում, երբ Հայաստանից ավելի քան 1 մլն զբոսաշրջիկ տարեկան այցելում է Վրաստանի Հանրապետություն: Հաշվի առեք, որ 500 ԱՄՆ դոլար արժողությամբ հանգիստը Վրաստանում, բազմապատկած 1 միլիոն մարդկանցով, Վրաստանի զբոսաշրջության մեջ ապահովում է 500 մլն ԱՄՆ դոլար: Նման մեծ ռեսուրսները կարող են ռեկորդային ժամանակում վերականգնել քո վեհությունը:

Հավատացած եմ, որ մեր հայրենակիցները ոչ միայն մեծ բավականություն կստանան՝ բացահայտելով քո մշակութային գրավչությունները, այլև ներքին բավարարություն կզգան՝ նպաստելով քո վերածննդին, ավելի վառ դարձնելով քո գույները, վերականգնելով քո էներգիան և փոխելով քո տրամադրությունը:

Քո մեջքին այսօր ծանր բեռ կա, քո ճակատին 30 տարվա կնճիռ կա: Սակայն որքան էլ պարադոքսալ թվա, ավերումը միշտ էլ նորի սկիզբն է: Ամեն անգամ, երբ վերադառնում եմ քեզ մոտ, ես նոր բան եմ տեսնում քո երիտասարդների դեմքին, քո նորից շարված փողոցներում, քո նոր խանութներում ու սրճարաններում, վերականգնված ուղենշային կառույցներում, հին թատրոններում, թանգարաններում ու սրճարաններում:

Դեպի վերականգնում տանող քո ուղևորությունն ամեն անցնող տարով ավելի է կարճանում: Եվ ես մտադիր եմ հեռավորության վրա լինել քեզ հետ:

Սիրով՝ Արմեն Սարգսյան

Հայաստանի Հանրապետության նախագահի
աշխատակազմի հասարակայնության հետ կապերի
վարչություն

МЕДАЛЬ ДОСТОЙНОМУ СООТЕЧЕСТВЕННИКУ

Памятная медаль им. И. К. Айвазовского под номером 115 в конце прошлого года была вручена одному из активных членов Местной армянской национально-культурной автономии городского округа Алушта Варужану Сарксяну.

Скромный по своей натуре человек, Варужан Максимович уже в течение многих лет вносит свой посильный вклад в сохранение языка, культуры и традиций армян Крыма.

Անցյալ տարեվերջին Հովհաննես Այվազովսկու անվան հուշամեդալով պարգևատրվեց ալուշտայաբնակ մեր հայրենակից Վարուժան Սարգսյանը:

Любительское фото

Տասնամյակներ ի վեր այս համեստ հայորդին իր ուժերի ներածին չափով զգալի ներդրում է կատարում Ալուշտա քաղաքի հայկական համայնքի զարգացման, հայկական ավանդույթների ու մշակույթի պահպանման գործում: Լինի դա նոր նկարչական ցուցահանդեսի բացում, թե՛ քաղաքային միջոցառմանը հայկական պարի խմբի կամ երգիչների ելույթի ապահովում, թե՛ հայկական ամսագրի բաժանորդագրում, թե՛ ուղղակի պատվավոր հյուրերի ընդունում, Վարուժանը միշտ էլ իր պատրաստակամությունն է հայտնում օգնելու, աջակցելու հայկական համայնքին, և այս բոլորն արվում է ի սրտե, առանց ավելորդ ինքնագովության և անշահախնդիր:

Շնորհավորում ենք մեր հայրենակցին և ցանկանում նորանոր հաջողություններ կյանքի բոլոր ոլորտներում:

Это интересно

ЧИСЛОВОЕ ЗНАЧЕНИЕ БУКВ АРМЯНСКОГО АЛФАВИТА

После создания в V веке Месропом Маштоцем письменности армянские буквы также использовались в качестве чисел. Так написаны все книги, касающиеся точных наук средневековой Армении. 36 букв алфавита размещены в четырёх строках по 9 в каждой и эквивалентны единицам, десяткам, сотням и тысячам.

ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՏԱՌԵՐԻ ԹՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

Մաշտոցյան գրի ստեղծումից հետո հայերեն տառերն օգտագործվել են նաև իբրև թվարժեքներ: Այդ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
1	2	3	4	5	6	7	8	9
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
10	20	30	40	50	60	70	80	90
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
100	200	300	400	500	600	700	800	900
Ռ	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ւ	Փ	Ք
1000	2000	3000	4000	5000	6000	7000	8000	9000

տառ-թվերով են ստեղծվել միջնադարյան Հայաստանի ճշգրիտ գիտություններին վերաբերող բոլոր գրքերը: Հայերեն 36 տառերը գրվել են 9-ականտառ պարունակող 4 շարքով, որոնք համապատասխանորեն նշանակում են միավորներ, տասնավորներ, հայրուրավորներ և հազարավորներ:

Այս 36 տառերի զուգորդմամբ կարելի է գրել 1-ից մինչև 9999 բոլոր ամբողջ թվերը, օրինակ. ծա = 51, ռջղ = 1990, քջղթ = 9999: Հետագայում հայկական այբուբենում ավելացված օ տառը նշանակել է 10000: Մեծ թվերի համար հայերենն ունեցել է հատուկ անվանումներ և պայմանանշաններ: Օրինակ, 10000-ն անվանել են բյուր և նշանակել ^, որը դրվելով տառաթվանշանի վրա, այն մեծացրել է 10000 անգամ: Այսպես՝ ա = 10000 բ = 20000 ժ = 100000 ք = 90000000

«ЗЕМЛЯ ПОКИНУТАЯ, НО НЕ ЗАБЫТАЯ. ВОСПОМИНАНИЯ О КРЫМЕ»

Торжественное открытие выставки «Земля покинутая, но не забытая. Воспоминания о Крыме» состоялось 9 июня 2018 года в Крымском этнографическом музее.

В экспозиции представлено более 350 экспонатов из фондов Ростовского областного музея краеведения, среди которых – живописные и графические работы нахичеванских художников А. Арцатбаняна, А. Ованесова, С. Гампарцумова, памятные медали XVIII века, исторические документы, книги, фотографии, предметы быта, макет армянского подворья, традиционные костюмы донских армян, а также коллекция медной посуды XVIII века из фондов Крымского этнографического музея.

У посетителей была возможность ознакомиться с историей города Нор – Нахичевани (с 1838 г. – Нахичевань-на-Дону) и пяти сёл, которым были

даны названия Чалтырь, Мец Сала, Топты (Крым), Султан Сала, Несветай.

Дополняли выставку фотоиллюстрации крымских хачкаров – армянских архитектурных памятников и святынь, представляющих собой каменную стелу с резным изображением креста, фотографа Константина Эрлиха (г. Симферополь). Всего на выставке представлено 21 изображение.

С приветственным словом к присутствующим обратился директор Крымского этнографического музея Юрий Лаптев, рассказав о концепции выставки и её организаторах.

Начальник управления музейного и библиотечного дела Министерства культуры Республики Крым Елена Эмирова отметила, что армянская община Крыма всегда активно участвует в культурных мероприятиях полуострова, а открывшаяся выставка будет способствовать сохранению традиционной армянской культуры. Она выразила благодарность Министерству культуры Ростовской области и Ростовскому краеведческому музею,

который одним из первых стал представлять свои коллекции в крымских музеях.

Связи армян Крыма и Ростова, по словам исполнительного директора Нор-Нахичеванской армянской общины Сергея Саядова, продолжаются уже на протяжении 240 лет. В качестве подарка Крымскому этнографическому музею он передал картину с изображением монастыря Сурб Хач в Ростове-на-Дону.

Основанная в преддверии Кавказа Новая Нахичевань в ряду российских колоний занимала особое место. Возникла она не в результате вынужденного стихийного бегства армян, а в соответствии с подготовленным российской имперской политикой организованным переселением крымских христиан.

Центром культурной жизни, просвещения армянских переселенцев стал монастырь Сурб Хач (Святой крест), на территории которого существовала первая на юге России типография.

Ново-Нахичеванская колония вошла в историю страны как уникальное место сохранения культурно-исторических и духовных ценностей армян.

Заместитель председателя Региональной армянской национально-культурной автономии Республики Крым Ваган Вермишян выразил надежду, что выставка будет способствовать более широкому знакомству с историей и культурой армянского народа и передал в дар музею две книги о крымских армянах.

Директор Ростовского областного музея краеведения Галина Куликова поблагодарила рабочую группу, которая участвовала в создании выставки, сотрудников и директора Крымского этнографического музея, а также правительство Ростовской области и Нор-Нахичеванскую армянскую общину за финансирование этого проекта.

Юрий Лаптев передал в дар Ростовскому областному музею краеведения два издания: «Шедевры музейных коллекций Крыма» и «Крымская весна».

После официальной церемонии во внутреннем дворе музея состоялся концерт, в котором прозвучали мелодии на дудуке в исполнении Санасара Товмасяна, Нина Багдасарян продемонстрировала всю красоту армянского танца, а Мария Товмасян продекламировала притчу Ованеса Туманяна «Ничто не вечно…». Всех присутствующих армянская община Симферополя пригласила на фуршет.

Выставку, в открытии которой приняли участие гости из Мордовии и Екатеринбурга, научная и творческая интеллигенция, специалисты музейного дела, представители национально-культурных и общественных организаций, средств массовой информации, организовали Министерства культуры Республики Крым и Ростовской области, Крымский этнографический музей, Ростовский областной музей краеведения, Историко-этнографический музей с. Чалтырь Мясниковского района Ростовской области.

Евгения Баранова,
заведующая отделом
культурно-просветительской,
выставочной и методической работы
Крымского этнографического музея.
(с редакционными дополнениями)

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ – 150

Исполнилось 150 лет со дня рождения национального поэта Армении, писателя, общественного деятеля, одного из самых прославленных сыновей армянского народа Ованеса Туманяна.

Լրացավ հայ ժողովրդի պանծալի զավակներից մեկի՝ գրական, ազգային և հասարակական գործիչ, Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150–ամյակը: Այս նշանավոր տարելիցին է նվիրված մեր հանդեսի գրական էջը:

Հովհաննես Թաղևոսի Թումանյանը ծնվել է 1869 թվականի փետրվարի 19-ին Լոռվա Դսեղ գյուղում:

Հովհաննես Թումանյանի հայրը՝ Ասլանը (1839–1898), գյուղի քահանան էր՝ ձեռնադրված որպես Տեր-Թաղևոս: Նա պատկանում էր ազնվական Թումանյան տոհմին, որ սերում էր Տարոնից 10–11-րդ դարերում Լոռի գաղթած Մամիկոնյաններից: Մայրը՝ Սոնան (1842–1936), ծագում էր Քոչարյանների տոհմից և նույնպես դսեղցի էր: Լինելով զրույց սիրող և լավ պատմող կին՝ նա իր երեխաներին լեգենդներ, առակներ և հեքիաթներ էր պատմում՝ համեմված ժողովրդական ոճով և դարձվածներով:

Թումանյանն ութ երեխաներից ամենաավագն էր. մյուս երեխաներն էին՝ Ռոստոմ (1871–1915), Օսան (1874–1926), Իսկուհի (1878–1943), Վահան (1881–1937), Աստղիկ (1885–1953), Արշավիր (1888–1921), Արտաշես (1892–1916):

1877–1879 թվականներին Թումանյանը սովորել է Դսեղի ծխական դպրոցում: 1879–1883 սովորել է Ջալալօղլու (այժմ Ստեփանավան) նորաբաց երկսեռ դպրոցում: 1883 թվականից բնակվել է Թիֆլիսում: 1883–1887 թվականներին սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, սակայն նյութական ծանր դրության պատճառով 1887 թվականին կիսատ թողնելով ուսումը՝ աշխատել է Թիֆլիսի հայ եկեղեցական դատարանում, այնուհետև՝ Հայ հրատարակչական միության գրասենյակում (մինչև 1893 թ.): 1893 թվականից աշխատակցել է «Աղբյուր», «Մուրճ», «Հասկեր», «Հորիզոն» գրական պարբերականներին:

1888 թվականին՝ տասնինը տարեկան հասակում, Թումանյանն ամուսնացել է տասնյոթամյա Օլգա Մաճկալյանի հետ: Նրանք ունեցել են 10 երեխա՝ Մուշեղ (1889–1938), Աշխեն (1891–1968), Նվարդ (1892–1957), Արտավազդ (1894–1918), Համլիկ (1896–1938), Անուշ (1898–1927), Արփենիկ (1899–1981), Արեգ (1900–1939), Սեդա (1905–1988), Թամար (1907–1989):

1899 թվականին նրա նախաձեռնությամբ Թիֆլիսում ստեղծվել է «Վերնատուն» գրական խմբակը, որի անդամներն էին Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Լևոն Շանթը, Ղազարոս Աղայանը, Պերճ Պռոշյանը, Նիկոլ Աղբալյանը և ուրիշներ: Որոշ ընդմիջումներով խմբակը գործել է մինչև 1908 թ.:

1912 թվականին Թումանյանն ընտրվել է նորաստեղծ Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահ, իսկ 1918 թվականին՝ Հայոց հայրենակցական միությունների միության (ՀՀՄՄ) նախագահ: Առաջին համաշխարհային պատերազմում (1914–1918 թթ.) հայ ժողովրդի կրած վնասները հաշվելու և Փարիզի հաշտության խորհրդաժողովին (1919–1920 թթ.) ներկայացնելու նպատակով ՀՀՄՄ–ն 1918 թվականին ստեղծել է Քննիչ հանձնաժողով՝ Թումանյանի գլխավորությամբ:

1921 թվականի աշնանը Թումանյանը մեկնել է Կոստանդնուպոլիս՝ հայ գաղթականների համար օգնություն գտնելու նպատակով: Մի քանի ամիս մնալով այնտեղ՝ նա վերադառնում է հիվանդացած: 1922 թվականին տարած վիրահատությունից հետո Թումանյանի ինքնազգացողությունը լավանում է, սակայն սեպտեմբերին հիվանդությունը դարձյալ իրեն զգալ է տալիս: Թումանյանին տեղափոխում են Մոսկվայի հիվանդանոցներից մեկը, սակայն 1923 թվականի մարտի 23-ին՝ 54 տարեկան հասակում Հովհաննես Թումանյանը վախճանվում է:

20-րդ դարի սկզբին Թումանյանը հայտնի է դառնում նաև որպես հասարակական գործիչ: 1905–1906 թվականներին հաշտարարի դեր է կատարել ցարական կառավարության հրահրած հայ-թաթարական կռիվների ժամանակ, որի պատճառով երկու անգամ ձերբակալվել է: 1918 թվականին հայ-վրացական պատերազմի ժամանակ խստագույնս քննադատել է երկու հավատակից ժողովուրդների թշնամությունը հրահրողներին:

Թումանյանին մշտապես մտահոգել և հուզել է հայ ժողովրդի ճակատագիրը, Մեծ Եղեռնի հետևանքով Արևմտյան Հայաստանից տեղահանված հայության վիճակը: 1916 թվականին 2 անգամ եղել է ազատագրված

վայրերում. հասել է մինչև Վան, օգնել հայ գաղթականներին, հատկապես Էջմիածնում հավաքված որբ երեխաներին: 1914 թվականին Թումանյանը միանում է Պատերազմից վնասվածներին օգնող կոմիտեին, որ հետագայում օգնեց մազապուրծ եղած հայ գաղթականներին Էջմիածնում հաստատվել:

Թումանյանն իր առաջին ստեղծագործությունը գրել է 12 տարեկանում, երբ սովորում էր Ջալալօղլու դպրոցում: Թումանյանը գրել է բանաստեղծություններ, պոեմներ, քառյակներ, բալլադներ, պատմվածքներ ու հեքիաթներ, ակնարկներ, քննադատական ու հրապարակախոսական հոդվածներ:

Թումանյանն իր ստեղծագործություններով հեղաշրջում է կատարել հայ բազմադարյան գրականության մեջ: Նրա լեզուն և մտածողությունը պարզ են, ժողովրդական: Նա խորությամբ է արտացոլել հայ ժողովրդի հոգեբանությունը, մտքերն ու ձգտումները: Թումանյանն իր քնարերգության մեջ արծարծել է հայրենասիրական, սոցիալական, քաղաքական, փիլիսոփայական, սիրային թեմաներ: Իրական կյանքի պատկերն ու սոցիալական անարդարության դեմ խտացված բողոքն են արտահայտված «Գութանի երգը», «Խրճիթում» և այլ բանաստեղծություններում: «Հին օրհնություն» բանաստեղծությունը հայ ժողովրդի վշտի, ձգտումների ու երազանքների խտացումն է: «Հայոց լեռներում» բանաստեղծության մեջ, խոսելով հայ ժողովրդի դարավոր պատմության, մաքառումների և տանջալից ուղու մասին, հավատով է պատկերել հայրենիքի անպարտելի ու ստեղծագործ ոգին.

Ու մեր աչքերը նայում են կարոտ՝
Հեռու սարերին
Երկնքի ծերին,
Թե ե՞րբ կբացվի պայծառ առավոտ՝
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում:

«Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը Թումանյանը գրել է Մեծ Եղեռնի օրերին. նրա յուրաքանչյուր տունը մեր պատմության ու գոյափիլիսոփայության յուրօրինակ խտացում է: Առաջին երկու քառատողերում «Զարկված ու զրկված, ողբի ու որբի հայրենիքի» պատկերներն են, իսկ երրորդը և չորրորդն ավարտվում են «Լույսի և հույսի, նոր ու հզոր հայրենիք» արտահայտություններով:

Թումանյանը գրականության զարգացման հիմնական աղբյուրներ համարել է բանահյուսությունը՝ լեգենդները, առակներն ու ավանդությունները, հեքիաթները («Աղավնու վանքը», «Չարի վերջը», «Գառնիկ ախպերը», «Մի կաթիլ մեղրը» և այլն): Այս սկզբունքով են ստեղծված նաև «Սասունցի Դավիթ» (անավարտ), «Թմկաբերդի առումը» պոեմները, «Ախթամար», «Փարվանա» բալլադները:

«Հառաչանք» (անավարտ), «Լոռեցի Սաքոն», «Մարոն» և «Անուշ» պոեմներում պատկերել է հայ նահապետական գյուղն իր բարքերով, սովորույթներով, սոցիալ-կենցաղային հակասություններով: «Անուշ» պոեմը հավերժական ու անմահ սիրո հուզիչ պատմություն է: Հերոսուհին՝ Անուշը, կորցնելով իր սերը, կորցնում է նաև հոգեկան հավասարակշռությունը, չի կարողանում այլևս ապրել «պաղ ու տխուր» աշխարհում և իրեն նետում է գետը՝ վիշտը խառնելով Դեբեդի ալիքներին: Պոեմում Թումանյանը քննադատել է գյուղի հնացած, քարացած սովորույթները և նեղմիտ պատվախնդրությունը:

Թումանյանը մշակել է երկու տասնյակից ավելի հայկական ժողովրդական հեքիաթներ («Տերն ու ծառան», «Ոսկու կարասը», «Զախորդ Փանոսը», «Անբան Հուռին», «Քաջ Նազարը» և այլն), փոխադրել է այլ ժողովուրդների հեքիաթներ: Նա տիեզերքի, հավերժի, կեցության ու գոյաբանական խնդիրներ է քննել իր քառյակներում, որտեղ անձնական ապրումների ընդհանրացումներով հասել է համամարդկային արժեքների գնահատման:

Հայ արձակի լավագույն էջերից են Թումանյանի պատմվածքները, որոնք մեծ մասամբ նվիրված են գյուղին, կենցաղին, բնությանը: «Գիքորը» պատմվածքում քաղաքի բարքերին զոհ դարձած գյուղացի պատանու ողբերգական պատմությունն է: Պատմվածքում պատկերված են դարի նյութապաշտությունը և մարդու վեհ երազանքների փլուզումը:

Թումանյանը գրել է նաև մանկական բանաստեղծություններ, «Շունն ու կատուն», «Անբախտ վաճառականները» լեգենդները, չափածո և արձակ այլ գործեր: Հզոր ներշնչանքով է գրված «Սասունցի Դավիթ» պոեմը, որտեղ Թումանյանը պատկերել է հայ ժողովրդի ազատաբաղձ ոգին:

Թումանյանը մասնակցել է «Լուսաբեր» դասագրքի և «Հայ գրողներ» քրեստոմատիայի ստեղծմանը: Իր հոդվածներում արծարծել է հասարակական կյանքի, գրականության, բանահյուսության, հայոց լեզվի ու բարբառների զարգացման հարցեր, գրել է ուսումնասիրություններ Նահապետ Քուչակի, Նաղաշ

Հովնաթանի, Խաչատուր Աբովյանի և նրա «Վերք Հայաստանի» վեպի, Սայաթ-Նովայի, հայ հերոսական էպոսի պատմական արմատների մասին: Թարգմանել է Ալեքսանդր Պուշկինի, Ջորջ Բայրոնի, Միխայիլ Լերմոնտովի, Հենրի Լոնգֆելլոյի և ուրիշների գործերից: Թումանյանը ծավալել է նաև հասարակական և գրական լայն գործունեություն:

Թումանյանի ստեղծագործությունները ժողովրդականացել են, լույս են տեսել տարբեր նկարիչների պատկերազարդումներով, վերածվել երգերի: Նրա գործերի հիման վրա Արմեն Տիգրանյանը գրել է «Անուշ» (ըստ համանուն պոեմի), Ալեքսանդր Սպենդիարյանը՝ «Ալմաստ» (ըստ «Թմկաբերդի առումը» պոեմի) օպերաները, նկարահանվել են բազմաթիվ մուլտիպլիկացիոն («Ձախորդ Փանոսը», «Սուտլիկ որսկանը» և այլն) ու գեղարվեստական («Անուշ», «Գիքորը», «Տերն ու ծառան», «Չախ-Չախ թագավորը») ֆիլմեր:

Թումանյանի բազմաթիվ երկեր թարգմանվել են ռուսերեն, ուկրաիներեն, բելառուսերեն, վրացերեն, տաջիկերեն, ուզբեկերեն, լիտվերեն, անգլերեն, պարսկերեն, իտալերեն, իսպաներեն, հունարեն, արաբերեն, ճապոներեն, շվեդերեն, չինարեն, ղազախերեն և այլ լեզուներով: 1980 թվականին սահմանվել է Հայաստանի գրողների միության Թումանյանի անվան ամենամյա մրցանակ: 1957 թվականին օպերայի և բալետի թատրոնի շենքի առջև՝ Թատերական հրապարակում, կանգնեցվել է նրա հուշարձանը: Ի պատիվ Հովհաննես Թումանյանի են անվանվել. հայրենի Դսեղ գյուղը (1938–1969 թթ.), Վանաձորի պետական համալսարանը, Երևանի տիկնիկային թատրոնը, Երևանի Թումանյան փողոցը, Երևանի Աջափնյակ համայնքի Թումանյան այգին: 1951 թ. Լոռու Ծաղիկձոր գյուղը վերանվանվել է Թումանյան:

Հայաստանից դուրս Թումանյանի անվան հրապարակ կա Մոսկվայի Հյուսիսային վարչական շրջանում, փողոց Թբիլիսիում, Կիևում և Դոնեցկում:

Հայաստանում կա Թումանյանի երկու թանգարան՝ տուն-թանգարանը ծննդավայր Դսեղում, իսկ մյուսը՝ Երևանում: Վերջինս բացվել է 1953 թվականին:

2011 թվականի աշնանը Հայաստանի կառավարությունը գնեց Թումանյանի թիֆլիսյան տունը: Այդ տան բանալիները ներկայումս պահվում են Հայաստանի գրողների միությունում:

Հայաստանի Հանրապետության 5-հազարանոց թղթադրամի վրա մինչև 2019 թվականը պատկերված է եղել Թումանյանի դիմանկարը:

Նվարդ Թումանյանի հուշերից

Հայրիկը շատ հոգատար էր տասը երեխաներից ամեն մեկի հանդեպ: Երբ մեկը հիվանդանում էր՝ մոտենում էր, գրկում, գուրգուրում, տաքությունն իմանում, հետո հարցնում. «Սիրուն ջան, ի՞նչ ես ուզում, որ բերեմ…»: Երբ ասում էինք՝ ոչինչ, բացականչում էր. «Պա՛հ, էդ ինչ դժվար բան ուզեցիր. ես ոչինչը որտեղի՞ց գտնեմ…»:

* * *

Մրգի սիրահար էր, ամեն տեսակի միրգ էր գնում, շատ էր սիրում խնձոր և ընկույզ: Մի օր ընկույզ էր առել՝ ամբողջ մի պարկ. բերին տուն, քանի կոտրեցինք՝ փուչ դուրս եկավ: Հարցրինք, թե՝ հայրիկ, ինչո՞ւ չէիր փորձում, հետո առնում, թե՝ մի հինգը կոտրեցի, բոլորը փուչ դուրս եկան, ասի, ուրեմն մնացածը լավը կլինի. ծախողն էլ մի խեղճ մարդ էր, ուզում էր ծախի, շուտ տուն գնա, ասում էր՝ երեխեքս սոված են. մեղքս եկավ՝ վերցրի:

* * *

Թումանյանի զավակներն էլ իրենց հերթին փորձում էին իրենց շնորհալիությամբ, արվեստի նկատմամբ տածած սիրով արտահայտել շնորհակալությունը հայրիկին: Տասը զավակներով ստեղծել էին «Մանուկ» ընկերությունը, որի բոլոր նախաձեռնությունները անցնում էին Թումանյանի ակտիվ մասնակցությամբ: Այսպես, երբ Աշխենի տանը Մուշեղը բեմադրեց Թումանյանի «Ծաղիկների երգը», կակաչի դերը վստահեց Թամարին: Համլիկջուրը, Արեգարևը, Սեդիկաղջիկը, Անուշարևածաղիկը, Արփիկշուշանը, Թամարկակաչի հետ շատ ուրախացրին բանաստեղծին: Այդ մասին վկայում է նրա լավագույն հուշագիրը՝ Նվարդ Թումանյանը. «Հայրիկը շատ հավանեց»:

* * *

Թումանյանը հաճախ էր կատակում, զվարճանում երեխաների հետ, և քանի որ զավակներն էլ ամեն ինչով ձգտում էին նմանվել իրենց հայրիկին, ապա Թամարին դեռ մանկուց խորթ չէին հումորն ու կատակը, հատկապես հայրիկի հետ զրուցելիս: 1919 թ., երբ Լոռեցիների հայրենակցական միությունը հրավիրել էր Թումանյանին նրա 50-ամյա հոբելյանը նշելու, բանաստեղծը կատակում է, թե. «Գնում եմ լոռեցիների քեֆին, շաշերը հավաքվել են»: Իր հայրիկին նոր բացահայտած 12-ամյա Թամարը պատասխանում է. «Դու ամենամեծ լոռեցին ես, ուրեմն դու ամենամեծ շաշն ես»:

* * *

Վ. Տերյանը ժամեր շարունակ խոսում էր պոեզիայի երաժշտայնությունից, տաղաչափությունից: Բանաստեղծության ձևը նրան շատ էր զբաղեցնում: Ֆրանսիական բանաստեղծներ Վեռլենն ու Բոդլերը նրան այնպես էին գերել, որ նա երազում էր տեսնել Փարիզը, մեծ ցանկություն ուներ Փարիզի սրճարաններում գիշերներ անցկացնելու՝ Վեռլենի ու Բոդլերի սրճարաններում, նրանց սեղանների շուրջը:

Հայրիկը համամիտ չէր Տերյանի հետ.

– Վահանը լիրիկ տրամադրության, մեղմ բնավորության բանաստեղծ է: Նա չի օգտվում ժողովրդական լեզվի անհուն գանձերից: Մինն ասի՝ դու Ախալքալակ ես ապրել, Լուսաղբյուրից ես ջուր խմել, քո երկրից խոսի, քո ժողովրդի լեզվով բան ասա, նրա շունչը տուր, նրա ոճը բեր… Ի՞նչ ես գնացել Փարիզի մայթերն ու կաֆեները երգում, հետո էլ տերողորմյա քաշում. էդ հալա հերիք չի, գալիս է էստեղ, ինձ հետ էլ վիճում, ուզում է համոզի, թե սա է ճիշտը: Ես ոչ մի բանում էնպես համոզված չեմ, ինչպես լեզվի խնդրում: Ճիշտը սա է՝ ժողովրդական կենդանի լեզվով պետք է գրել, որ ժողովուրդը կարդա, բան հասկանա:

* * *

Շատ էր ուզում, որ երեխաները դառնան նուրբ և ազնիվ ճաշակի տեր մարդիկ:

Ասում էր. «Ամենից շատ ինձ մարդու անճաշակ լինելն է բարկացնում: Ամենագլխավորը կյանքում ճաշակն է: Ճաշակը կյանքի բույրն է: Հսկող աչք է, սիրող ձեռք և գթառատ սիրտ»:

Բնավորությամբ պարզ էր, լավատես ու ժպտուն, ամեն ինչ հեշտացնող, հեշտ ու թեթև տանող, բայց իր վիշտն ու ցավը տանում էր վարագուրած, անտրտունջ: Նույնիսկ մտերիմ մարդիկ չգիտեին նրա հոգսերն ու տառապանքները: Եվ իր անձնական, ընտանեկան և գրական կյանքի բոլոր դժվարություններն ու նեղությունները տարել, հաղթահարել է մեն-մենակ:

Նրա հայտնի քեֆերն ու ժամանցներն ասես ինքնամոռացման միջոցներ էին, խաբում էր և՛ իրեն, և՛ ուրիշներին. «…Ուզում եմ մի կերպ ժամանակն անց կացնել, քեֆի մեջ լինի, թե զրույցի»:

«Իմ ուրախության ժամերին մասնակից եմ անում բոլորին, իսկ իմ արցունքներն ու վիշտը հայտնի են միայն ինձ»,– Կարլեյլի այս խոսքը հայրիկը կարող էր ասել իր մասին:

Շատ ոգևորվող էր և ուրիշներին էլ ոգևորող, տրամադրող: Շատ էր տպավորվող, զգայուն. մի փոքրիկ լավ վերաբերմունք բավական էր, որ ջերմանար, ուրախանար և ընդհակառակը՝ վատ վերաբերմունքից՝ նեղանար, փակվեր, հեռանար:

* * *

Թումանյանը հաճախ էր ասում.

– Գրել եմ միայն էն ժամանակ, երբ հիվանդ եմ եղել, և բժիշկներն արգելել են որևէ մեկի այցելությունը:

Մի օր ասաց.

– Էս «Հազարան բլբուլն» էլ վզիս է չոքել, մի երկար չեմ հիվանդանում, որ մի բան դուրս գա:

* * *

Թումանյանի տիկինը, տասը երեխաների մայրը, բարեմտորեն գանգատվելիս է եղել, որ Հովհաննեսն իսկի տուն չի գալիս: Թումանյանը նրան պատասխանել է.

– Ո՞նց թե տուն չեմ գալիս, ա՛յ կնիկ, եթե իսկի տուն չեմ եկել, մի տասն անգա՞մ էլ չեմ եկել:

* * *

Խնկո-Ապերը ինչ-որ մի խոսք նետեց Թումանյանին: Թումանյանը վեր կացավ:

– Երբ մեկը հրացանը քաշում է և ուզում է մի ուրիշին խփել, եթե հրացանը լիքն է, խփվողն է վախենում, իսկ եթե հրացանը դատարկ է, խփողն է վախենում: Խնկո–Ապերը հրացանն ինձ ուղղեց ու…վախեցավ…

Բոլորն սկսեցին ծիծաղել: Խնկո-Ապերն այնքան քաշվեց աթոռի մեջ, որ էլ չէր երևում:

* * *

Թումանյանը և Ահարոնյանը իրար չէին սիրում: Մի օր Թումանյանը ինձ (Վ. Թոթովենց) ցույց տվեց մի այցետոմս: Ահարոնյանը գրում էր. «Հովհաննես, եկա տունդ, տանը չէիր, անհունապես տխրեցի»:

Թումանյանը ծիծաղեց և ասաց.

– Շատ լավ, եթե իմ՝ տանը չլինելը քեզ անհունապես տխրեցնում է, ապա եթե մեռնեմ, ո՞նց ես տխրելու, ա՛յ մարդ, մի փրազին մտիկ. չէ՞ որ «անհունապեսից» դենն էլ բան չկա, անհունապե՛ս…փլա՛ն-փստա՛ն…

* * *

Իմացողը գիտի, որ Թումանյանն ու Ղազարոս Աղայանը բացառիկ ընկերներ էին: Էնքան ու էնպիսի, որ էդ ամենը տարօրինակ հեռազգացության ու իրար մտքերը կարդալու էր հասնում: Թումանյանն Ասլան ապեր էր ասում Աղայանին, նա էլ Թումանյանին՝ Ասլան բալասի:

Ահա մի օր, ուրեմն, երբ Թումանյանը շատ վշտացած է լինում և ազգի վիճակից, և աջից ու ձախից իրեն ուղղվող նետերից, նաև՝ ֆինանսական դժվարություններից, Աղայանը, որ հնչակ էր, սոսկալի է նեղվում ընկերոջ վիճակից, և որովհետև «էստեղ Ասլան բալասու հարգը չգիտեն», առաջարկում է դառնալ հնչակ, մեկնել Լոնդոն, էնտեղ խաղաղ ապրել, ստեղծագործել ու խմբագրել հնչակների թերթը: Թումանյանս տանում-բերում է, ասում. «Այտա՛, էնպես ես ասում Լոնդոն, ասես՝ էդ Լոնդոնդ Լոռին լինի, հնչակ սաւծդ էլ իրոք հնչի, վա՛»:

* * *

Իբրև բարեկամ և ընկեր Ղ. Աղայանն անսահման անձնվեր էր: Նրա ամենամտերիմ բարեկամն իր հոգևոր սանն էր՝ Հովհաննես Թումանյանը: Մի գիշեր նա երազում տեսնում է, որ ինչ-որ ավազակներ հարձակվել են Թումանյանի տան վրա: Սարսափից զարթնելով՝ անմիջապես հագնվում է ու դուրս վազում:

– Ա՛յ տղա,– պատմում էր ինձ հետևյալ օրը Թումանյանն իրեն հատուկ հումորով,– գիշերվա երեք ժամին

մի ձայն արթնացրեց ինձ: Ականջ եմ դնում՝ Ղազարոսն է: «Հովհաննե՛ս, Հովհաննե՛ս»,– գոռում էր նա մեր գավթից: Ես երկրորդ հարկում եմ ապրում: Լուսամուտս բաց եմ անում, նայում եմ վար.

– Հը՞, ի՞նչ կա, ա՛յ մարդ, ի՞նչ է պատահել,– հարցնում եմ, կարծելով, որ փորձանք է եկել գլխին:

– Ա՛յ տղա, Հովհաննե՛ս, տա՞նն ես:

– Հա, տեսնո՞ւմ ես, որ տանն եմ:

– Ա՛յ տղա, կենդանի՞ ես:

– Հա, ի՞նչ կա:

– Այ տղա, առո՞ղջ ես:

– Հա՛, հա՛, ի՞նչ ես ուզում:

– Ոչինչ, պառկի՛ր ու քնի՛ր, բարի գիշեր:

Ասաց ու գնաց: Պառկեցի քնելու, քունս չտարավ: Առավոտյան կանուխ վազեցի մոտը, տեսնեմ՝ ի՞նչ է պատահել:

– Երազ էի տեսել,– ասաց նա:

Լեոն Թումանյանի մասին

…Մի օր մոտն էի, խոսում էինք կովկասագիտությունից: Մի նոր գիրք էր գնել, սեղանի վրա տեսա (Маевский, «Закавказье»): Ասի՝ Օհանես, մի քանի օրով տուր տանեմ կարդամ, ետ բերեմ: Սովորաբար նա իր գրքերը տուն չէր տալիս, ինձ էս անգամ բացառություն արավ, տվեց: Տարա, սկսեցի կարդալ, տեսա, որ թերթերից շատերը դեռ կտրտված էլ չեն: Կարդացի, մի քանի օրից եկա մոտը: Խոսք ընկավ էդ գրքից, ասի՝ Օհանես, դու էդ գիրքը ո՞նց ես կարդացել, որ թերթերը դեռ կտրտված էլ չեն. բան չասաց: Զրույցը շարունակեցինք, քիչ հետո խոսք գցեց էդ գրքից, հետն էլ մի կարծիք հայտնեց, որը միանգամայն նոր էր ինձ համար: Ասի՝Օհանես, էդ որտեղի՞ց գիտես, թե՝ հենց էդ գրքիցն եմ ասում, որ տարել ես, կարդացել ու ետ բերել…Շատ ծիծաղեցինք…

* * *

Թումանյանի տանը Անդրանիկն իր կռիվներից ինչ–որ բան էր պատմում, և Թումանյանը կլանված լսում էր.

– Թուրս քաշեցի…,– ասաց Անդրանիկը և կանգ առավ:

Նա ուներ այդպիսի սովորություն, այդ կանգ առնելը ժամանակ էր տալիս, որպեսզի լսողն ընդգրկի պահը: Բայց Թումանյանը չհամբերեց և սկսեց գոռալ.

– Խփի՛ր, խփի՛ր…

* * *

Մի օր սեղանի շուրջը Թումանյանն առաջարկում է խմել Անդրանիկի կենացը և ասում.

– Սրանից 20 տարի առաջ կար երկու նշանավոր բան՝ Խրիմյան Հայրիկը և իմ «Շունն ու կատուն», 20 տարի է անցել, բայց էլի երկու նշանավոր բան կա՝ իմ «Շունն ու կատուն» և Անդրանիկը, խմում եմ երկու նշանավորներից մեկի՝ Անդրանիկի կենացը:

Հովհ. Թումանյանի հումորով արված այդ գեղեցիկ և իմաստալից համեմատությունը շատ աշխույժ ծիծաղ է առաջացնում: Անդրանիկը դրան պատասխանում է.

– Կանցնեն տարիներ, ո՛չ ես կլինեմ, ո՛չ էլ Թումանյանը, բայց կլինի մի նշանավոր բան՝ «Շունն ու կատուն», խմենք նրա կենացը:

Զորավար Անդրանիկը Թումանյանի մասին

Անհատներ կան, որոնց ներկայությունը հանրային ու ընկերային կյանքին մեջ հմայք, ուժ, վստահություն և ոգևորություն կներշնչե: Այսպիսի անձերուն կյանքը և անոնց մատուցած ծառայությունները ժողովուրդը ոչ միայն կդիտե և կվայելե հանդիսատեսի աչքերով, այլ գիտե հարգել, սիրել և գնահատել: Այսպիսի ժողովրդային դեմքերեն մեկն էր հայ գեղջկական բանաստեղծության ռահվիրան, բանաստեղծ Հովհաննես Թումանյան:

1904 թ. առաջին անգամ ըլլալով տեսա և ճանչցա զայն իր բնակարանին մեջ սևքարեցի Սաքոյին միջոցավ: Բանաստեղծը իր զվարթ ու խնդուն բնավորությամբ լավ տպավորություն և անուշ զգացումներ ունենալու հմայքը ստեղծեց մեջս: Առաջին տեսակցությամբ մտերիմներ ու բարեկամներ էինք: Մեկ նայվածք մը բավ էր՝ հասկնալու ու ճանչնալու անոր սրտի անբիծ ու նկարագրին անաղարտ վիճակը: Մագնիսական ուժ մը քաշած կապած էր զիս իրեն ավելի սիրելու, ավելի մտերմանալու, ավելի հիանալու և հարգելու: Բաց էին իր տան դռները բոլորին առջև: Վանքի մը պես ամեն օր ուխտավորներ և այցելուներ կմտնեին ու կելնեին՝ վայելելով այդ նահապետական տան ճոխ բարիքներին ու սեղանները: Առանց հյուրի սեղան չէր նստեր և ոչ ալ օրը կփակեր առանց բարի գործ մը կամ ծառայություն մը կատարելու: Վրեժխնդրություն, քեն, ատելություն, չարիք, նախանձ՝ կյանքի այս զգացումները անծանոթ էին իրեն: Բյուրեղի պես մաքուր և պարզ էր իր սիրտն ու հոգին, ու մանիշակի չափ խոնարհ ու քնքուշ: Տիպար հայ էր՝ ազգասեր ու գործունյա: Այս գեղեցիկ ու բարձրագույն հատկանիշներով օժտված բանաստեղծը ոչ միայն սիրելի ու հարգելի էր հայ ժողովրդին, այլ կհարգվեր և կսիրվեր ռուս, վրացի, պարսիկ և թաթար ժողովուրդներեն…

1915 թ., երբ Վասպուրականը գրավվեցավ ռուսներեն, Թումանյան Վան եկավ տեսնելու իր ժողովուրդն ու հայրենիքը ավելի մոտեն: Ի՞նչ տպավորություններով վերադարձավ՝ չեմ գիտեր, բայց երբ 1915–ին Մեծ գաղթը եղավ ռուսներու կեղծ նահանջով, բանաստեղծը իր տունը, իր ընտանիքի վայելքները թողուցած, եկավ իր երկու չափահաս աղջիկներուն հետ Էջմիածին, Իգդիրի և Երևանի վանքի պատերուն տակ խռնված գաղթականներուն օգնելու:

* * *

Թոթովենցը Թումանյանին առաջին անգամ տեսել է Էջմիածնի վանքի բակում, որտեղ հավաքվել էին մեծ թվով գաղթականներ: Ամեն կետում մարդ էր մեռնում, շատերը՝ սովից կամ հիվանդություններից…

Հանկարծ սկսում է անձրև, որը քիչ ժամանակ անց վերածվում է տեղատարափ անձրևի և հեղեղում է գետինը: Ամեն տեղ լցվեց գաղթականներով, բայց դեռ հազարավոր գաղթականներ դրսում էին, և Թումանյանը ստիպված գաղթականների առաջ բացում է նոր կառուցվող վեհարանը, որ մինչև այդ անձեռնմխելի էր:

Դա զայրացնում է Գևորգ Ե Կաթողիկոսին:

Ասում էին, որ երեկոյան Վեհափառը կանչել է Թումանյանին և հանդիմանել նրան այդ «բռնի» գործողությունների համար: Վեհափառը պատվիրել է, որ Թումանյանն այլևս այդպիսի բան չանի, սակայն Թումանյանը պատասխանել է, որ պիտի անի, եթե անհրաժեշտություն լինի: Հայոց Հայրապետը կանգնել է ոտքի և հայտարարել.

– Դուք խոսում եք Ամենայն Հայոց Հայրապետի հետ:

Գրողը նրան պատասխանել է.

– Իսկ դուք խոսում եք Ամենայն հայոց բանաստեղծի հետ:

* * *

Ամերիկացիներից մեկը, չգիտեմ թե ինչու, հարց տվեց Թումանյանին.

– Ի՞նչ տարբերություն եք զգում հայերի և ամերիկացիների միջև:

– Ամերիկացիները ծնվում են, ապրում և մեռնում, իսկ հայերը ծնվում են, ապրում և սպանվում,– պատասխանում է գրողը:

ՔԱՌՅԱԿՆԵՐ

Հիմա բացե՛լ են հանդես
Երգիչները իմ անտես.
Ջա՛ն, հայրենի ծղրիդներ,
Ո՞վ է լսում հիմի ձեզ:

* * *

Ո՞ւր կորա՛ն…
Մոտիկներս ո՛ւր կորա՛ն,
Ինչքան լացի, ձեն ածի՝
Ձեն չտվին, լո՛ւռ կորան:

* * *

Երկու դարի արանքում,
Երկու քարի արանքում,
Հոգնել եմ նոր ընկերի
Ու հին ցարի արանքում:

* * *

Ե՛տ եկե՛ք…
Գարնան վարար գետ եկե՛ք,
Անցա՛ծ օրեր, խինդ ու սե՛ր,
Դարձե՛ք, իրար հետ եկե՛ք:

* * *

Ձուր եմ փախչում, ինձ խաբում,
Հազար կապ կապ է ինձ կապում.
Ամենքի հետ ապրում եմ,
Ամենքի չափ տառապում:

* * *

Ո՜վ իմանա՝ ո՛ւր ընկանք,
Քանի օրվա հյուր ընկանք.
Սերն ու սիրտն էլ երբ չկա՝
Կրա՛կ ընկանք, զո՛ւր ընկանք:

* * *

Քանի՜ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել, լույս տվել,
Լույս տալով եմ սպառվել:

* * *

Ինչքա՛ն ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել,
Վատը՝ լավ եմ տեսել ես:

* * *

Լինե՛ր հեռու մի անկյուն,
Լինե՛ր մանկան արդար քուն,
Երազի մեջ երջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն:

* * *

Հե՜յ ազահ մարդ, հե՜յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ,
Քանի՜ քանիսն անցնա քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.
Ի՞նչ են տարել նրանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ,
Խաղա՛ղ անցիր, ուրա՛խ անցիր երկու օրվան էս ճամփեդ:

* * *

Քուն թե արթուն՝ օրհս շատը երազ եղավ, անցկացավ,
Երազն էլ, նուրբ ու խուսափուկ, վրազ եղավ, անցկացավ.
Վռազ անցան երազ, մուրազ, ու չհասա ոչ մեկին,
Կյանքս թեթև տանուլ տված զրազ եղավ, անցկացավ:

* * *

Ո՞ր աշխարհքում ունեմ շատ բան. միտք եմ անում՝ է՞ս, թե՞ էն.
Մեջտեղ կանգնած՝ միտք եմ անում, չեմ իմանում՝ է՞ս, թե՞ էն.
Աստված ինքն էլ տարակուսած չի հասկանում՝ ինչ անի,
Տանի՛, թողնի՛, ո՞րն է բարին, որ սահմանում, է՞ս, թե՞ էն:

* * *

Խայյամն ասավ իր սիրուհուն. «Ոտքդ զգույշ դիր հողին,
Ո՜վ իմանա՝ որ սիրունի բիբն ես կոխում դու հիմի…»:
Հե՜յ, ջա՛ն, մենք էլ զգույշ անցնենք, ո՜վ իմանա, թե հիմի
Էն սիրուհու բի՞բն ենք կոխում, թե՞ հուր լեզուն Խայյամի:

* * *

Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի.
Խտփան, խոպան ու անպտուղ, անցավ առանց արդյունքի:
Ի՜նչքան ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին…
Ի՞նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տվողին…

* * *

Աղբյուրները հնչում են ու անց կենում,
Ծաղավները տենչում են ու անց կենում,
Ու երջանիկ ակունքներին երազուն՝
Պոետները կանչում են ու անց կենում:

* * *

Էնքան շատ են ցավերն, ավերն իմ սրտում,
Էնքան տրտում կորած լավերն իմ սրտում…
Չեմ էլ հիշում չար ու խավար էս ժամին՝
Երբ են փայլել ուրախ օրերն իմ սրտում:

* * *

– Էս է, որ կա… Ճիշտ ես ասում. թաղդ բե՛ր:
Էս էլ կերթա՝ հանց երազում, թաղդ բե՛ր:
Կյանքն հոսում է տիեզերքում զնգալեն,
Մեկն ապրում է, մյուսն սպասում. թաղդ բե՛ր:

* * *

Հե՜յ ճամփանե՛ր, ճամփանե՛ր.
Անդարձ ու հին ճամփաներ,
Ովքե՞ր անցան ձեզանով,
Ո՞ւր գնացին, ճամփանե՛ր:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻՆ

Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանն շնորհավորական ուղերձ է հղել ՀՀ ազգային հերոս, Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 90-ամյա հոբելյանի առթիվ՝ մաղթելով նրան առողջություն, արևշատություն և ստեղծագործական անսպառ եռանդ:

«Հայ երգը և երաժշտությունը, որպես հոգու և հոգևորի համահավաք արտահայտություն, Ձեր խմբավարական տաղանդի շնորհիվ դարձել են միջազգային այն այցեքարտը, որով հպարտությամբ կարող ենք ներկայանալ ու ներկայացնել մեր երկիրն ու ժողովրդին:

Դուք դիրիժորական ու երգչախմբային արվեստի ինքնատիպ մարմնավորումն եք, Հայաստանի պետական կամերային երգչախմբի կենդանի արտացոլանքը, մարդ, որի ստեղծագործական շարունակական որոնումներն ու անսպառ էներգիան մեր մշակութային հարատևության երաշխիքն են:

Ձեր կատարողական անհատականության անջնջելի կնիքով աշխարհով մեկ բարձր հնչում է հայկական երգչախմբային արվեստի անունը»,– ասված է նախագահ Արմեն Սարգսյանի շնորհավորական ուղերձում:

Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչություն

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ – 90

Լրացավ խորհրդային երգչախմբային դիրիժոր, կոմպոզիտոր և մանկավարժ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Հայաստանի ազգային հերոս, Երևանի պատվավոր քաղաքացի Հովհաննես Չեքիջյանի 90-ամյակը:

Հովհաննես Հարությունի Չեքիջյանը ծնվել է 1928 թվականի դեկտեմբերի 23-ին Կոստանդնուպոլսում (ներկայում՝ Ստամբուլ, Թուրքիա): 1934–1941 թվականներին սովորել է Վիեննայի Մխիթարյան դպրոցի՝ Կոստանդնուպոլսի մասնաճյուղում, 1941–1947 թվականներին՝ Saint Michel ֆրանսիական քոլեջում, 1944–1951 թվականներին՝ Ստամբուլի կոնսերվատորիայում, 1947–1951 թվականներին Վիեննայի ուսումնարանի Ստամբուլի մասնաճյուղում, 1951–1953 թվականներին՝ Փարիզի «Ecole normale de Musique» կոնսերվատորիայում, ինչպես նաև քիմիայի ինստիտուտում, որտեղ ստացել է ինժեներ-քիմիկոսի որակավորում: 1958–1961 թվականներին եղել է Ստամբուլի կոնսերվատորիայի ասպիրանտ:

1946–1960 թվականներին (1951–1954 թթ. ընդմիջմամբ) Ստամբուլի պետական երգչախմբի գլխավոր դիրիժորի տեղակալն էր, միաժամանակ 1958–1961 թթ. եղել է Ստամբուլի օպերայի երաժշտական ղեկավարը:

1961 թվականից ապրում է Հայաստանում, այդ թվականից էլ եղել է ՀԽՍՀ պետական ակադեմիական երգչախմբի գլխավոր դիրիժորը: Նրա ղեկավարությամբ կոլեկտիվը մեծ վարպետությամբ կատարել է դասական և ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները, հայկական ժողովրդական երգեր, օպերաներից հատվածներ: Ղեկավարել է նաև սիմֆոնիկ համերգներ, ելույթ է ունեցել ԽՍՀՄ խոշորագույն նվագախմբերի հետ: Հյուրախաղերով հանդես է եկել արտասահմանում՝ Ֆրանսիա, Հունաստան, ԱՄՆ, Շվեյցարիա, նախկին ԽՍՀՄ հանրապետություններ, ելույթներ աշխարհի 55 նվագախմբերի հետ, ավելի քան 700 ստեղծագործություն երգչախմբի երգացանկում՝ աշխարհի 27 լեզուներով:

Հեղինակ է երաժշտական ստեղծագործությունների, այդ թվում և «Գարնանային անուրջներ», «Տոնական ձոն» վոկալ-սիմֆոնիկ պոեմների: 1973–1977 թվականներին դասավանդել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, 1975 թվականից Երևանի կոնսերվատորիայում (1982 թվականից պրոֆեսոր է):

Հովհաննես Չեքիջյանի արվեստը բարձր է գնահատվել, նա արժանացել է բազմաթիվ պարգևների ու մրցանակների: Ահա դրանք. ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր, ԽՍՀՄ «Ժողովուրդների բարեկամություն» շքանշան, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության «Մեսրոպ Մաշտոց» մեդալ, Մովսես Խորենացու մեդալ, Հայ եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» մեդալ, Համաշխարհային հայկական կոնգրեսի «Ոսկե խաչ», Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշան, Մաղաքիա Պատրիարք Օրմանյանի անվան ոսկե շքանշան, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշան, Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշան, «Աշխատանքի վետերան» մեդալ:

ՍՈՎՈՐԻ՛Ր ՃԻՇՏ ԽՈՍԵԼ ՀԱՅԵՐԵՆ

ՀՈՐԴՈՐԱԿ 2

«ԱՐԴՅՈՒՆՔ», «ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ» ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ իմաստ ունի *«արդյունք»* բառը և ի՞նչ իմաստով է կիրառվում. արդյոք ունի՞ *«հետևանք» («հետևանքով»)*, *«պատճառ» («պատճառով»)* բառերի իմաստները: Իհարկե այո՛: Դա են վկայում բառարանները: Իսկ եթե ունի, նշանակում է՝ կարող է նաև դրանց փոխարինել, մանավանդ որ բառարաններում այս բառերի ոճական առանձնահատկությունների մասին ոչինչ ասված չէ: Ահա հենց այս պատճառով էլ ծագում են հարցեր, որովհետև հարկ է լինում ապացուցելու, որ «արդյունք» բառը, ունենալով «հետևանք» և «պատճառ» բառերի իմաստները, այնուամենայնիվ, ունի մի կարևոր յուրահատկություն: Նրա մեջ կա *դրական հետևանքի* իմաստ, ուստի չի կարող գործածվել այն դեպքերում, երբ խոսքը որևէ գործողության հաջորդած *բացասական հետևանքի* մասին է:

Ծագում է հաջորդ հարցը. իսկ ինչպե՞ս ապացուցել, որ նրա արտահայտած իմաստը դրական է: Պարզաբանենք: Չկա *արդյուն(ք)*-ով կազմված բառ (բացառությամբ ժխտական նախածանցներով կազմվածների), որ դրական իմաստ չունենա: Օրինակ՝ *արդյունավետ, արդյունաշատ, արդյունաշահ, արդյունատու, արդյունալի, արդյունարար* և այլն: Կարծում ենք՝ հենց այս փաստարկն էլ ասվածի ապացույցն է: Ապացույց են նաև ժխտական ածանցներով կազմված բառերը. *ան*- և *ապ*- նախածանցները «ապարդյուն» և «անարդյունք» բառերում «արդյունք»-ի դրական իմաստն են ժխտում:

Այժմ մեր խոսքի սկզբում արծարծած հարցը քննարկենք օրինակներով: Նախ անենք մեջբերումներ, որոնցում գործածվել են «*արդյունք*» և «*արդյունքում*» բառերը.

«Ես համոզված եմ, որ կատարվածը *թյուրիմացության արդյունք է»*:

«Անորակ ասֆալտն ու «անհետացող» բնակարանները *վատ կառավարման արդյունք են*»:

«Նավակում եղած մարդկանց թվաքանակը նախատեսվածից ավելին է եղել, ինչի *արդյունքում էլ նավակը սուզվել է*»:

«Ռազմակայանի մոտ տեղի ունեցած *պայթյունի արդյունքում տուժել է* հինգ զինվորական»:

«Ողբերգական դեպքի *արդյունքում տղամարդը մահացել է»:*

«*Միջադեպի արդյունքում 5 տուժած* տեղափոխվել է հիվանդանոց»:

Տվյալ օրինակներում եղածի, կատարվածի հետևանքը վատ է եղել, նույնիսկ շատ վատ: Մի դեպքում սուզվել է նավակ, մյուս դեպքում տուժել են մարդիկ, մեկ այլ դեպքում եղել են զոհեր: Այսինքն՝ կատարվել է այնպիսի բան, որը *դրական հետևանք, արդյունք* չէ: Մեջբերած բոլոր օրինակներում *արդյունք*-ի փոխարեն պետք է գործածվեին *«պատճառով»* կամ *«հետևանք»* / *«հետևանքով»* բառերը. «…կատարվածը *թյուրիմացության հետևանք է*», «… որի *պատճառով էլ նավակը սուզվել է*», «*Ողբերգական դեպքի հետևանքով տղամարդը մահացել է» և այլն:*

Այսպիսի սխալների պատճառը ռուսերենից բառացի թարգմանություններն են: Սակայն նկատենք, որ ռուսերենում *результат*-ը գործածվում է և՛ դրական, և՛ բացասական հետևանքների դեպքում: Հանգամանք, որը պետք է անպայման նկատի ունենալ:

Սխալի պատճառ է դառնում «в результате» կապային կառույցի բառացի թարգմանությունը *«արդյունքում»* կապական բառով: Նման կառույցները հայերենի լեզվամտածողությանը հարազատ չեն: *«Արդյունքում»* բառի այդպիսի կիրառությունից պետք է խուսափել՝ անկախ նրանից, թե ի՛նչ հետևանք է ունենում կատարված գործողությունը՝ դրակա՞ն, թե՞ բացասական: Այսինքն՝ պետք է ասել, օրինակ, ոչ թե «*Միայն լավ աշխատելու արդյունքում կունենանք զարգացած պետություն»*, այլ «*Միայն լավ աշխատելով կունենանք զարգացած պետություն»* կամ *«Միայն լավ աշխատելու շնորհիվ կունենանք զարգացած պետություն»:*

Նկատենք, որ ռուսերեն «в результате» կապային կառույցի իմաստը հայերենում հաճախ արտահայտում է «որպես արդյունք» բառակապակցությունը, ուստի «в результате»-ն կարելի է հենց այդպես էլ թարգմանել: Օրինակ՝ «Մենք պայքարել ենք հանուն ազատության: Որպես արդյունք՝ *(*ոչ թե *արդյունքում)* այսօր ունենք անկախ պետություն», «Թիմը սկսել է լավ խաղալ և որպես արդյունք՝ *(*ոչ թե *արդյունքում)* զբաղեցնում է առաջին տեղը»:

«Շնորհիվ» բառը նույնպես ունի դրական իմաստ, և շատ դեպքերում գերադասելի է նրա գործածությունը: Այսպես. «Նավակը չի սուզվել նավավարի արագ կողմնորոշվելու շնորհիվ *(*ոչ թե *արդյունքում)*», «Ահաբեկչությունը կանխվել է հմուտ գործողությունների շնորհիվ *(*ոչ թե *արդյունքում)*» և այլն:

Հավելենք նաև, որ երբեմն հանդիպում են *«արդյունք» («արդյունքում»)* բառի գործածության այնպիսի դեպքեր, որոնք ճիշտ չեն ոչ թե վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված, այլ այն պատճառով, որ պարզապես արդյունքի հարց չկա (ո՛չ դրական, ո՛չ բացասական, ո՛չ էլ չեզոք): Բերենք օրինակներ զանգվածային լրատվական միջոցների հրապարակումներից. «...վերջին *մոնիտորինգի արդյունքներով*՝ (փոխանակ՝ *լսա մշտադիտարկման տվյալների*) *նվազել են* շաքարավազի, ձվի, կաթնամթերքի ու մի քանի այլ ապրանքների գները», «ԿԸՀ-ից ստացված *պատասխանի արդյունքում* (փոխանակ՝ *պատասխանից) մի հարց էլ է առաջ* գալիս՝ ի վերջո, ո՞վ է ԿԸՀ նախագահը», «…նախարարների՝ մարզեր *կատարած այցերի արդյունքում ծագած* (փոխանակ՝ *այցերի ընթացքում*) *խնդիրների* առնչությամբ ասաց վարչապետը»:

Հիմք ընդունելով ասվածը՝

ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

1. չանտեսել «հետևանք» / «հետևանքով», «պատճառ» / «պատճառով», «շնորհիվ» բառերը և չչարաշահել «արդյունք» բառի գործածությունը,

2. խուսափել «արդյունքում» բառաձևը որպես կապական բառ գործածելուց:

ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵ



ՀՈՐԴՈՐԱԿ 3

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՍԱԹՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վերջին տասնամյակներում հայերեն փաստաթղթերում ամսաթվի, տարեթվի գրության անմիօրինակություն է առաջացել: Դա նկատվում է հատկապես այն դեպքերում, երբ վերջիններս քերականորեն չեն կապվում խոսքին, օրինակ՝ ձևաթղթերում: Հանդիպում են գրության այսպիսի ձևեր՝ 15 հունվար, 2018 թ. կամ 15 հունվարի, 2018 թ. կամ 15-ը հունվարի, 2018 թ. կամ հունվար 15 2018 թ. կամ հունվարի 15 2018 թ. կամ «15» հունվար 2018 թ. կամ «15»-ը հունվար 2018 թ. կամ 15-ը հունվար 2018 թ. կամ 15/01/2018 թ. կամ 15-01-2018 կամ 15.01.2018 և այլն:

Նկատելի է, որ ամսանվան (նաև ամիսը ցույց տվող թվի) և տարեթվի միջև ստորակետ երբեմն դրվում է, երբեմն՝ ոչ, ամսվա օրը ցույց տվող թիվը հաճախ առնվում է չակերտի մեջ, թվից հետո գրվում է -ը և այլն: Համեմատաբար նոր իրողություն է, որ օր-ամիս-տարի ցույց տվող թվերն իրարից առանձնացվում են թեք գծով, այլ ոչ թե միջակետով:

Այս անհարկի բազմաձևությունը վերացնելու և գրության որոշակի միօրինակություն հաստատելու նպատակով

ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը չակերտի մեջ չառնել և գրել առանց հոդի, իսկ ամսանունը՝ թեք (սեռական) հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019: Ամսանունը գրել փոքրատառ:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Ծառադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ. կամ 2019 թ. փետրվարի 1:

Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ և ոչ թե թեք գիծ կամ գծիկ: Օրինակ՝ գրել ոչ թե 25/01/2019 կամ 25-01-2019, այլ 25.01.2019:

«Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

Լեզվի կոմիտե

АРМЯНСКИЙ АЛФАВИТ И ТАБЛИЦА МЕНДЕЛЕЕВА: ЗАГАДОЧНАЯ СВЯЗЬ

Поразительные закономерности обнаружили исследователи, сравнив армянские обозначения химических элементов и их порядковые номера в Периодической системе Менделеева. Что это: случайное совпадение или мудрость создателя армянского алфавита Месропа Маштоца?

История создания армянской письменности сама по себе достойна отдельного увлекательного рассказа. На протяжении нескольких лет в начале V века н.э. армянский просветитель и ученый Месроп Маштоц с группой своих помощников разрабатывали алфавит, идеально подходящий для фонетических особенностей древнего армянского языка.

Проделанный Месропом Маштоцем труд был колоссален: взяв за основу элементы утраченной ранее армянской письменности, проанализировав фонетику множества существовавших на тот момент алфавитов и побуквенно отобрав наилучшее из них, великий армянский ученый создал поистине шедевр своего времени, полностью отвечавший нуждам языка на тот момент.

Можно сколько угодно восхищаться его работой и красотой результата, однако, помимо непосредственно лингвистических находок, у изобре-

тенного великим Месропом алфавита оказалась еще одна удивительная особенность.

БУКВЫ КАК НОМЕРА ХИМИЧЕСКИХ ЭЛЕМЕНТОВ

Сравнительно недавно был замечен интересный факт: если взять порядковые номера букв согласно алфавиту Месропа Маштоца, из которых состоит слово «золото» (по-армянски – «воски») и сложить их, то в результате получится число 79. Сегодня общеизвестно, что 79 – порядковый номер золота в таблице элементов, открытой Д. И. Менделеевым в 70-х годах XIX века. Более поздние физические исследования установили, что номер соответствует величине заряда ядра атома элемента. Естественно, Менделеев об этом знать не мог в силу зачаточного развития ядерной физики в те времена, а уж о Месропе Маштоце и говорить не приходится.

Однако такое совпадение так бы и осталось совпадением, если бы автору находки не пришла в голову идея проверить по той же методике и другие простые химические элементы, заведомо известные древним армянам на момент создания алфавита. Вот здесь и началось самое интересное.

Современное слово «арцат» имеет перевод с армянского как «серебро», но во времена Месропа Маштоца оно именовалось более коротко: «арц». Сложив порядковые номера в алфавите букв, составляющих это слово (1+32+14) получим 47, что опять же является номером серебра в системе Д. И. Менделеева!

Следующий элемент, безусловно, известный древним армянам, — свинец, в армянском языке – «арчич». Суммируем порядковые номера букв: 1 + 32 + 19 + 11 + 19 = 82. И снова стопроцентное попадание в заряд ядра атома свинца и положение элемента в таблице!

Та же история с древним названием ртути, которое звучит как «джандик». Складывая порядковые номера, получаем 80. Железо на древнеармянском «алгат» (современная форма – «еркат»). Все ровно то же самое: сумма порядковых номеров букв в алфавите Месропа равна 26, этой же цифрой обозначена позиция железа в таблице Менделеева и величина заряда ядра атома этого металла.

СОВПАДЕНИЕ ИЛИ МУДРОСТЬ?

Дальнейшие исследователи этой темы принялись пытаться подгонять под такую систему всю таблицу Менделеева, кое-какие усилия оказались даже правдоподобно выглядящими. Однако поверить в то, что в армянском языке V века существовало слово, обозначающее, например, азот, кадмий или гафний, – довольно затруднительно. Да, ученые того времени, жившие на Армянском нагорье и по соседству, были довольно продвинутыми, как сейчас принято говорить, однако все-таки не волшебниками, и их знания примерно соответствовали развитию человечества на тот момент.

Но как же так вышло, что как минимум 5–6 элементов периодической таблицы Д. И. Менделеева, причем наиболее распространенных в те времена и имевших обозначение в языке, великолепно укладываются в систему нумерации букв алфавита Месропа? По какому принципу создатель армянской письменности расставлял буквы внутри алфавита? При изучении исторических документов на эту тему и самого алфавита можно заметить сильное влияние греческого и финикийского письма, однако ни один из этих алфавитов не отличается никакими подобными закономерностями.

Периодическая таблица Д. И. Менделеева

Период	Ряд	ГРУППЫ ЭЛЕМЕНТОВ: I	II	III	IV	V	VI	VII	VIII		
1	1	(H)						H 1 1,00797 Водород	He 2 4,0026 Гелий		
2	2	Li 3 6,939 Литий	Be 4 9,0122 Бериллий	B 5 10,811 Бор	C 6 12,01115 Углерод	N 7 14,0067 Азот	O 8 15,9994 Кислород	F 9 18,9984 Фтор	Ne 10 20,179 Неон		
3	3	Na 11 22,9898 Натрий	Mg 12 24,305 Магний	Al 13 26,9815 Алюминий	Si 14 28,086 Кремний	P 15 30,9738 Фосфор	S 16 32,064 Сера	Cl 17 35,453 Хлор	Ar 18 39,948 Аргон		
4	4	K 19 39,102 Калий	Ca 20 40,08 Кальций	21 44,956 Sc Скандий	22 47,90 Ti Титан	23 50,942 V Ванадий	24 51,996 Cr Хром	25 54,9380 Mn Марганец	26 55,847 Fe Железо	27 58,9330 Co Кобальт	28 58,71 Ni Никель
	5	29 63,546 Cu Медь	30 65,37 Zn Цинк	Ga 31 69,72 Галлий	Ge 32 72,59 Германий	As 33 74,9216 Мышьяк	Se 34 78,96 Селен	Br 35 79,904 Бром	Kr 36 83,80 Криптон		
5	6	Rb 37 85,47 Рубидий	Sr 38 87,62 Стронций	39 88,905 Y Иттрий	40 91,22 Zr Цирконий	41 92,906 Nb Ниобий	42 95,94 Mo Молибден	43 [99] Tc Технеций	44 101,07 Ru Рутений	45 102,905 Rh Родий	46 106,4 Pd Палладий
	7	47 107,868 Ag Серебро	48 112,40 Cd Кадмий	In 49 114,82 Индий	Sn 50 118,69 Олово	Sb 51 121,75 Сурьма	Te 52 127,60 Теллур	I 53 126,9044 Йод	Xe 54 131,30 Ксенон		
6	8	Cs 55 132,905 Цезий	Ba 56 137,34 Барий	57 138,91 La* Лантан	72 178,49 Hf Гафний	73 180,948 Ta Тантал	74 183,85 W Вольфрам	75 186,2 Re Рений	76 190,2 Os Осмий	77 192,2 Ir Иридий	78 195,09 Pt Платина
	9	79 196,967 Au Золото	80 200,59 Hg Ртуть	Tl 81 204,37 Таллий	Pb 82 207,19 Свинец	Bi 83 208,980 Висмут	Po 84 [210]* Полоний	At 85 [210] Астат	Rn 86 [222] Радон		
7	10	Fr 87 [223] Франций	Ra 88 [226] Радий	89 [227] Ac** Актиний	104 [261] Rf Резерфордий	105 [262] Db Дубний	106 [263] Sg Сиборгий	107 [262] Bh Борий	108 [265] Hs Хассий	109 [266] Mt Майтнерий	110 [271] Ds Дармштадтий
	11	111 [272] Rg Рентгений	112 [285] Cn Коперниций	Nh 113 [286] Нихоний	Fl 114 Флеровий	Mc 115 Московий	Lv 116 Ливерморий	Ts 117 Теннессин	Og 118 [294] Оганесон		

Обозначение элемента — Li; Атомный номер — 3; 6,939 — Относительная атомная масса; Литий

Лантаноиды*	58 140,12 Ce Церий	59 140,907 Pr Празеодим	60 144,24 Nd Неодим	61 [147]* Pm Прометий	62 150,35 Sm Самарий	63 151,96 Eu Европий	64 157,25 Gd Гадолиний	65 158,924 Tb Тербий	66 162,50 Dy Диспрозий	67 164,930 Ho Гольмий	68 167,26 Er Эрбий	69 168,934 Tm Тулий	70 173,04 Yb Иттербий	71 174,97 Lu Лютеций
Актиноиды**	90 232,038 Th Торий	91 [231] Pa Протактиний	92 238,03 U Уран	93 [237] Np Нептуний	94 [244] Pu Плутоний	95 [243] Am Америций	96 [247] Cm Кюрий	97 [247] Bk Берклий	98 [252]* Cf Калифорний	99 [254] Es Эйнштейний	100 [257] Fm Фермий	101 [257] Md Менделевий	102 [255] No Нобелий	103 [256] Lr Лоуренсий

На сегодняшний день исследователи этого феномена выдвигают множество гипотез, пытающихся объяснить закономерность как с околонаучной точки зрения, так и с позиций совершенной мистики и эзотерики. Верить или не верить таким объяснениям — дело каждого, однако единой, общепринятой версии никому пока найти не удалось. Слишком уж фантастическими выглядят как простое совпадение, так и предполагаемое наличие у древних народов знаний о строении вещества на атомном уровне!

Великолепная работа великого сына армянского народа Месропа Маштоца, которой по сей день пользуются более 8 миллионов человек в повседневной жизни, оказалась еще и удивительной загадкой, раскрытие которой все еще ожидает своего автора, а возможно, и окажется тайной навсегда.

АРМЯНСКИЙ ГИМН ЗВУЧАЛ В ЦЕНТРЕ КИЕВА

В Киеве, в международном центре «Украинский дом» состоялось открытое первенство мира по спортивному единоборству «Elite Fight». Организаторами соревнований выступили «Всемирная федерация Elite Fight», «Международная федерация Elite Fight» – президент Алесандр Соломко, «Всеукраинская федерация Elite Fight» – президент Юрий Стельмащук и международная организация «Всемирная армянская диаспора» – президент Андраник Оганисян. Ведущим соревнования был известный украинский спортивный комментатор, поэт Дмитрий Лазуткин. В турнире участвовали спортсмены разных стран мира, в том числе из Армении.

Чемпионом турнира в весовой категории 84 кг стал представитель международной организации «Всемирная армянская диаспора» Гурген Ованян. Всем победителям вручал награды почетный президент «Всемирной федерации Elite Fight» и президент Всемирной армянской диаспоры Андраник Оганисян.

Международная организация «Всемирная армянская диаспора» всегда рядом с нашими спортсменами. Напомним, что представитель организации, призер чемпионата мира по самбо в 2018 году Арсен Казарян вошёл в десятку лучших спортсменов Армении. Арсен – сын легендарного спортсмена, пятикратного чемпиона мира по самбо, члена президиума Всемирной армянской диаспоры Гагика Казаряна.

СОВСЕМ ЕЩЁ ЮНЫЙ СПОРТСМЕН – АРМЯНИН ИЗ СИМФЕРОПОЛЯ ГЕВОРГ СЕРОБЯН НЕДАВНО СТАЛ ЧЕМПИОНОМ РОССИИ ПО ТЯЖЁЛОЙ АТЛЕТИКЕ

В нашей редакции была организована встреча с талантливым и перспективным спортсменом, в которой участвовали его тренер Михаил Заргарян, председатель Местной армянской национально-культурной автономии городского округа Симферополь Армен Мартоян, предприниматель и меценат Карен Яйлоян.

Отрадно было услышать о выдающихся достижениях спортсмена, увидеть большое количество медалей и наград, просто пообщаться со скромным, но уверенным в своих силах спортсменом.

Вот что рассказал о своём подопечном главный тренер сборной команды Республики Крым по тяжелой атлетике Михаил Сетракович Заргарян:

«Я тренирую Серобяна Геворга Владиковича уже три года. За это время он достиг очень хороших результатов. Год тому назад, на соревнованиях в Армении, сломал локоть. С такой травмой восстановиться и быть самым сильным в России – практически нереально. Но наш воспитанник впервые в истории тяжелой атлетики добился того, что после этого стал чемпионом России. Он выполнил норму мастера спорта России в возрасте всего лишь 15 лет. Это просто феноменально!

Сейчас Геворгу шестнадцать, и он – чемпион и призёр России, очень сильный спортсмен, его уважают тренеры сборной команды страны. Он имеет все шансы попасть на чемпионат мира в Лас-Вегасе. Сейчас его опять вызывают на сборы. Это очень хорошая перспектива. За всю историю моей работы, можно сказать, он выступает лучше, чем мой самый успешный спортсмен – заслуженный мастер спорта, мастер спорта международного класса, а у меня их было семь человек. И по темпам развития, спортивного совершенствования он – самый лучший, поэтому я пришел обратиться к вам за армянского спортсмена, который достоин высоких европейских и мировых наград. Как армянин, я лично обязан содействовать и помогать молодому человеку независимо от того, на какой должности буду находиться.

Я буду помогать ему наравне со своими детьми, чтобы он добился высоких результатов, чтобы на пьедестале всегда стоял на первом месте. Будем держать за него кулаки, болеть и переживать. Действительно, это наша гордость – в 16-летнем возрасте участвовать в соревнованиях среди юношей до 19 лет и занять первое место – слава и хвала парню. При весе 69 килограммов он в рывке зафиксировал 130 кг, толкнул 150 кг.

Он еще и очень сильный духом человек, настоящий представитель своего народа.

Наш народ, где бы ни проживал, всегда поддерживает свою силу воли и дух, присущие нашей идентичности, и демонстрирует, что мы – богатыри независимо от нашего телосложения. Дух может помочь совершать очень большие подвиги. Я горд и рад, что среди молодежи есть такие парни, которые выбрали себе достойный путь».

Геворг занимается тяжёлой атлетикой 6 лет, из них 2,5 – в Армении. Переехав в Крым в конце 2015 года, он начал тренироваться у Михаила Сетраковича Заргаряна, который очень помог спортсмену добиться выдающихся результатов. Сейчас Г. Серобян учится в 9-ом классе ОШ № 31 Симферополя.

В конце встречи Армен Мартоян пообещал всячески содействовать продвижению юного спортсмена, ежемесячно оплачивая часть расходов на спортивное питание и снаряжение. Такую обязанность взял на себя также Карен Яйлоян.

Наша редакция будет следить за участием юного спортсмена в соревнованиях и периодически информировать о его достижениях. И мы, конечно, призываем присоединиться к стараниям наших соотечественников. Давайте поддержим молодых талантов во всех сферах жизнедеятельности!

16–27 марта в Москве проходило первенство России по тяжёлой атлетике среди юниоров и юниорок 15–20 лет. Наш соотечественник Геворг Серобян в весовой категории до 73 кг в рывке набрал 132 кг и занял 1 место. Его результат в толчке – 153 кг (2 место). В сумме двоеборья юный спортсмен с результатом 285 кг стал серебряным призёром первенства.

Поздравляем нашего соотечественника с этим успехом и желаем дальнейших спортивных достижений!

Праздник Сретения Господня (Тэрэндез) в Армянском дворике.

Проект поддержан Государственным комитетом по делам межнациональных отношений и депортированных граждан Республики Крым и Государственным автономным учреждением Республики Крым «Медиацентр им. Исмаила Гаспринского».

Подписано в печать 26.03.2019 г. Формат 60x84 1/8 . Печать офсетная.
Тираж 500 экз. Заказ № . Выход в свет 16.04.2019. Цена свободная.

Адрес редакции:
295034, Республика Крым, г. Симферополь, проспект Победы, 12.

Адрес издателя:
295048, Республика Крым, г. Симферополь, ул. Трубаченко, д. 23а

Отпечатано в типографии ООО «КОНСТАНТА»
308519, Белгородская обл., Белгородский р-н, п. Северный, ул. Березовая, 1/12
Тел./факс +7 (4722) 300-720, www.konstanta-print.ru